

2013 թ. ՀՀ նախագահի ընտրությունների վերաբերյալ
ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի

ԱՐՏԱՀԵՐԹ ԶԵԿՈՒՅՑ

ՀՀ մարդու իրավունքների պաշտպան Կարեն Անդրեասյանը հետևյալ կերպ է գնահատել 2013թ. ՀՀ նախագահի ընտրությունները. Ընտրություններն ավելի ազատ էին, բայց շատերը չեն հավատում դրանց արդարությանը:

ԸՆՏՐՈՒՅՈՒՆՆԵՐԻ ԱՐԴԱՐՈՒԹՅԱՆ ԾԱՏԵՐԸ ՉԵՆ ՀԱՎԱՏՈՒՄ, ՈՐՈՎՅԵՏԵՎ

- Տասնամյակներ շարունակ նույնիսկ ամենաբիրտ և ակնհայտ ընտրախախտումների պարագայում գրեթե բոլոր պետական ինստիտուտները (Ոստիկանություն, Դատախազություն, ԿԸՀ, Սահմանադրական դատարան) պատշաճ չեն արձագանքել դրանց, ինչը պահպանել և խորացրել է հանրության վստահության ցածր մակարդակը ընտրական գործընթացների նկատմամբ:
- Ընտրությունների ընթացքում ստացվել են ընտրակաշառքի բաժանման 100 ահազանգ, սակայն Ոստիկանությունը քննության արդյունքում չի բացահայտել ընտրակաշառքի գեթ մեկ դեպք, մինչդեռ կրկնակի քվեարկության 20 ահազանգերի պարագայում 4-ը բացահայտվել են:
- Ընտրությունների ընթացքում գրանցվել են վարչական ռեսուրսի չարաշահման մի շարք դեպքեր, որոնց կապակցությամբ որևէ անձի նկատմամբ մեղադրանք չի առաջադրվել:
- Ստացված 293 ահազանգերի դեպքերից 273-ով իրավապահ մարմինների կողմից կայացվել են որոշումներ քրեական գործերի հարուցումը մերժելու մասին, այնինչ չեն իրականացվել քրեական դատավարության օրենսգրքով նախատեսված անհրաժեշտ բոլոր քննչական գործողությունները:
- Առանձին դեպքերում իրավապահ մարմինները ընտրակաշառքների և այլ ընտրահանցանքների վերաբերյալ ահազանգերը քննելիս բացատրությունները հիմնականում վերցրել են համայնքապետից կամ իշխանական կուսակցության ներկայացուցչից: Հետևաբար, ըստ ներկայացված տեղեկատվության, ոչ բոլոր դեպքերում է կատարվել բազմակողմանի քննություն, այսինքն՝ անհրաժեշտ և բավարար հիմնավորումներով գործերը ավարտելու համար չեն ներգրավվել գործի ելքով չշահագրգռված բոլոր պատշաճ անձինք:
- Անձնագրերի դրոշմակնքման օրենսդրական պահանջը, որպես կրկնակի քվեարկության բացառման երկաստիճան համակարգի մաս չի ծառայել իր նպատակին, քանի որ օգտագործված թանաքը հեշտորեն հնարավոր էր հեռացնել անձնագրերից:
- Ընդդիմադիր ուժերի և որոշ միջազգային կազմակերպությունների կողմից բացասականորեն ընդգծվել է և կասկածների տեղիք է տվել այն հանգամանքը, որ գործող Նախագահին կողմ քվեարկած ձայներն էականորեն մեծ թիվ են կազմել այն տեղամասերում, որտեղ միջինից բարձր է եղել ընտրողների մասնակցությունը:

ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ԱՎԵԼԻ ԱԶՍԵՒՆ, ՈՐՈՎՅԵՏԵՎ.

- Թեկնածուների գրանցման ընթացքում օրենքի որևէ խախտում չի արձանագրվել:
- Թեկնածուների քարոզչության, խաղաղ հավաքների և հրապարակային միջոցառումների ընթացքում չեն գրանցվել էական խոչընդոտման դեպքեր:
- Պատշաճ կարգով պահպանվել են ՀՀ Նախագահի թեկնածուների քարոզչության լուսաբանման և խոսքի ազատության ապահովման օրենսդրական պահանջները և հավասար հնարավորություններ են ընձեռվել բոլոր թեկնածուների համար:
- Շուրջ 3500-ով նվազել են ընտրողների ցուցակներում առկա անճշտությունները, իսկ ՀՀ Ոստիկանությունն էականորեն բարելավել է ընտրողների ցուցակներում անճշտությունների վերացմանն ուղղված վարչարարությունը:
- Կենտրոնական ընտրական հանձնաժողով ուղղված դիմում-բողոքների ուսումնասիրման ընթացքում խնդիրների լուծման ժամանակ էականորեն նվազել է իրավական ձևապաշտությունը (ֆորմալիզմը):
- ՀՀ Ազգային ժողովում ներկայացված բոլոր քաղաքական ուժերի ու ՀՀ Նախագահի թեկնածուների կողմից առաջադրված է եղել թվով 20690 վստահված անձ և հանձնաժողովի անդամներ: Մասնավորապես, <<Ժառանգություն>> կուսակցությունը 1988 տեղամասային ընտրական հանձնաժողովներից 1884-ում (95 տոկոս) ունեցել է առաջադրած անդամներ: Ընդդիմության ներկայացուցիչները ներկայացրել են միայն 12 վերահաշվարկի դիմում և միայն 70 քվեարկության արդյունքներ անվավեր ճանաչելու դիմում (118 տեղամասերում):
- Ընտրական գործընթացի թերությունների մասին 1988 ընտրական տեղամասերից միայն 44 ընտրական հանձնաժողովների գրանցամատյաններում են կատարվել համապատասխան գրառումներ:
- Ընտրությունների հետընտրական զարգացումների ընթացքում ապահովվել է անձանց ազատ տեղաշարժվելու և հավաքներին մասնակցելու իրավունքը:
- ՀՀ Ոստիկանության և ՀՀ Դատախազության կողմից ընտրախախտումների մասին շուրջ 300 հաղորդումները ավելի մանրամասն են ուսումնասիրվել և առավել հստակ տվյալներ են տրամադրվել քննության արդյունքների վերաբերյալ:
- Ընտրախախտումների ահագանգերի բնույթը ըստ համայնքների հիմնականում տարբեր է եղել, հետևաբար ընտրախախտումները չեն կրել համակարգված համապետական բնույթ և չեն իրագործվել միասնականորեն մշակված և մեկ կենտրոնից ուղղորդվող մեխանիզմներով:

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

2013թ. նախագահական ընտրությունների ողջ ընթացքում Մարդու իրավունքների պաշտպանի 116 թեժ գծի և արագ արձագանքման ծառայությունը ստացել է 255 ահազանգ: Այդ ահազանգերից 43-ի դեպքում քաղաքացիները կարիք են ունեցել իրավաբանական խորհրդատվության, ստացել են այն և կարողացել են լուծել իրենց հուզող խնդիրը: 52 ահազանգեր, նույնիսկ առերևույթ, հիմնավոր չեն եղել, այսինքն՝ գանգատը չի պարունակել մարդու իրավունքների խախտում, կամ ահազանգում չի ներկայացվել ընտրախախտման որևէ փաստական հանգամանք: Միաժամանակ ուսումնասիրելով նաև միջազգային և տեղական կազմակերպությունների զեկույցները, մամուլի արժանահավատ և չհերքված հրապարակումները՝ ստորև ներկայացնում ենք ընտրությունների նախընտրական շրջանում, քվեարկության օրը և հետընտրական փուլում անձանց ընտրական իրավունքի իրականացման վերաբերյալ մեր դիտարկումները, սակայն՝ ոչ սպառիչ:

ՆԱԽԸՆՏՐԱԿԱՆ ՓՈՒԼ

2013 թվականի Հայաստանի Հանրապետության Նախագահի ընտրություններին Նախագահի թեկնածուները կարող էին ընտրություններին մասնակցելու հայտ ներկայացնել Կենտրոնական ընտրական հանձնաժողով 2012 թվականի դեկտեմբերի 25-ից մինչև 2013 թվականի հունվարի 4-ը: Մասնակցության հայտ ներկայացնելու գործընթացում որևէ ահազանգ չի գրանցվել:

Նախագահի թեկնածու առաջադրվելու համար պարտադիր պահանջ է վերջին 10 տարում ՀՀ քաղաքացի հանդիսանալը և վերջին 10 տարում ՀՀ-ում մշտապես բնակվելը: ՀՀ ոստիկանության անձնագրային և վիզաների վարչության կողմից այդպիսի տեղեկանք չի տրամադրվել երեք անձանց, որոնցից միայն երկուսն են բողոքարկել այդ որոշումը Վարչական դատարանում, սակայն դատարանը թողել է վերոնշյալ որոշումն անփոփոխ: Այլ խնդիրներ, վերջին 10 տարում ՀՀ քաղաքացի հանդիսանալու և վերջին 10 տարում ՀՀ-ում մշտապես բնակվելու տեղեկանքի տրամադրման վերաբերյալ, չեն գրանցվել:

Որոշ թեկնածուների կողմից հարց էր բարձրացվել ընտրագրավի ինստիտուտի սահմանադրականության մասին: Այսպես, Պաշտպանին էր դիմել ՀՀ նախագահի ընտրություններին որպես թեկնածու առաջադրված Պավլիկ Սարգսյանը՝ պահանջելով օգնել իրեն Ընտրական օրենսգրքով նախատեսված 8 մլն դրամ ընտրագրավի պահանջը հակասահմանադրական ճանաչելու գործում: Դիմումի ուսումնասիրման արդյունքում չի հայտնաբերվել դրույթի սահմանադրականությունը վիճարկելու որևէ հիմք: Ընտրագրավը ընդունված է բազմաթիվ ժամանակակից ժողովրդավարական հասարակություններում, ինչպիսիք են Մեծ Բրիտանիան, Ֆրանսիան, Կանադան և այլ երկրներ, և այն, ըստ էության, հանդիսանում է երաշխիք նրա, որ Նախագահի թեկնածուն իրականում վայելում է հասարակության որոշ զանգվածի աջակցությունն ու վստահությունը: Այս խնդրի վերաբերյալ Նարինե Մկրտչյանը դիմում էր ներկայացրել Սահմանադրական դատարան, որը Դատարանը մերժեց մարտի 5-ին իր թիվ ՄԴՈ 1076 որոշմամբ: Դատարանի որոշմամբ հստակ սահմանվել էր, որ Ընտրական օրենսգրքի՝ ընտրագրավին վերաբերող հոդվածները համապատասխանում են ՀՀ Սահմանադրությանը և թեկնածուների թվի ավելացումը կարող է հանգեցնել նաև վարչական դժվարությունների, պետական բյուջեից չհիմնավորված ծախսերի և, վերջապես, ընտրական գործընթացների նկատմամբ հասարակության վստահության անկման:

Նախընտրական փուլում ընտրական իրավունքների իրացման վերաբերյալ Պաշտպանին հասցեագրված ահազանգերը (77 ահազանգեր) ըստ խնդիրների և դրանց մանրամասների ներկայացված են ստորև:

Ընտրողների ցուցակներ

Պաշտպանի «Թեժ գիծ» ծառայության կողմից ստացված ահազանգերից 38-ը վերաբերել են ընտրողների ցուցակում տեղ գտած անճշտություններին, որոնց վերաբերյալ տեղեկատվությունը ամբողջությամբ ներկայացվել է Ոստիկանություն՝ ընտրացուցակներում համապատասխան ուղղումներ իրականացնելու համար: Մասնավորապես՝ բողոքները հիմնականում վերաբերել են մահացած, Հայաստանի Հանրապետությունից դուրս գտնվող և տվյալ հասցեում գրանցված բնակարանի նախկին սեփականատեր հանդիսացող անձանց տվյալները ընտրական ցուցակներում ընդգրկված լինելուն: Ոստիկանության կողմից նմանատիպ խնդիրների վերաբերյալ կատարված հայտարարության համաձայն՝ իրականացրած միջոցառումների արդյունքում Ընտրողների ռեգիստրից հանվել են 1893 մահացած անձանց անհատական տվյալներ, շուրջ 2089 քաղաքացիներ հաշվառվել են փոխհատուցման կարգով ստացած նոր բնակելի տարածությունների հասցեներում, իսկ 10 և ավելի հաշվառումներ ունեցող հասցեներում 3513-ով նվազել են ընտրողների ցուցակներում առկա անճշտությունները: Այսինքն, անճշտությունների թիվը և դրան վերաբերող բողոքները նվազել են 2012 թվականի խորհրդարանական ընտրությունների համեմատությամբ: Այսպես, 2012 թվականի խորհրդարանական ընտրություններին ընտրողների ցուցակների անճշտությունների վերաբերյալ Ոստիկանությունը ստացել էր 6.411 տեղեկություն, որոնցից ուղղումներ էին կատարվել 3.818 անձանց հետ կապված տվյալների դեպքում: Ուստի, ընտրողների ցուցակների վերաբերյալ իրականացվող վարչարարությունը բարելավվել է :

Միևնույն ժամանակ հաշվի առնելով այն հանգամանքը, որ ընտրողների ցուցակները կազմվում են ՀՀ ոստիկանության անձնագրային և վիզաների վարչության կողմից, որը պատասխանատու է ընտրողների ռեգիստրի վարման և պահպանման համար, իսկ ընտրողների ռեգիստրը հիմնված է քաղաքացիների հաշվառված բնակության վայրի վրա, ապա հարկ ենք համարում նշել, որ համաձայն «Բնակչության պետական ռեգիստրի մասին» ՀՀ օրենքի համապատասխան դրույթների՝ այն դեպքերում, երբ փոփոխվում է քաղաքացու հաշվառման վայրը, քաղաքացին է կրում պարտավորություն այդ մասին տեղեկացնել իրավասու պետական մարմնին: Ուստի ընտրական ցուցակներում անճշտությունների վերացումը որոշ չափով պայմանավորված է նաև քաղաքացիների կողմից պատշաճ հետևողականության ցուցաբերմամբ:

Քարոզարշավի խոչընդոտում

2013 թվականի Հայաստանի Հանրապետության Նախագահի ընտրությունների քարոզարշավը մեկնարկել է հունվարի 21-ին և տևել է մինչև փետրվարի 16-ը: Նախընտրական քարոզչությունը հիմնականում անցել է ազատ և առանց էական խոչընդոտների, ինչը դրական նախադրյալներ է ստեղծել բոլոր թեկնածուների հավասար մրցակցության պայմանների համար: Նախընտրական փուլում գրանցված քարոզարշավի ոչ էական խոչընդոտման դեպքերը ներկայացվում են ստորև, սակայն՝ ոչ սպառիչ:

2013թ. հունվարի 24-ին ՀՀ ոստիկանություն է ահազանգել «Ժառանգություն» կուսակցության ներկայացուցիչ Ս.Բարխուդարյանը և հայտնել է, որ Բաֆֆու փողոց թիվ 33

շենքի մոտ անհայտ անձինք խոչընդոտել են և չեն թողել իրենց բաժանել «Ժառանգություն» կուսակցության նախընտրական բուկլետները:

Սույն թվականի փետրվարի 9-ին ՀՀ ոստիկանության Երևան քաղաքի վարչության օպերատիվ-կառավարման կենտրոն է գանգահարել Ա.Զաքարյանը և հայտնել, որ Մուրացան փողոցի թիվ 184 հասցեում գտնվող՝ ՀՀ նախագահի նախկին թեկնածու Հրանտ Բազրատյանի նախընտրական շտաբի պաստառները անհայտ անձի կողմից պատռվել և գողացվել են:

2013թ. նախագահական ընտրությունների նախընտրական քարոզչության ընթացքում գրանցվել է նաև քարոզարշավի խոչընդոտման մեկ այլ դեպք, որը զուգորդվել է բռնության կիրառմամբ: Համաձայն վերոնշյալ դեպքի՝ Երևան քաղաքի Արգունանյան 12 շենքում ՀՀ Նախագահի նախկին թեկնածու Րաֆֆի Հովհաննիսյանի ակտիվիստներին ծեծի են ենթարկել:

Գրանցվել է նաև դեպք, երբ նախընտրական քարոզչության խոչընդոտումը իրականացվել է պաշտոնական դիրքը օգտագործելով, մասնավորապես՝ Արարատի մարզի Վանաշեն գյուղի գյուղապետ Արտաշես Գրիգորյանը խոչընդոտել է նախագահի թեկնածու Րաֆֆի Հովհաննիսյանի օգտին գյուղում իրականացվող քարոզարշավին: Նշված գործով որոշում է կայացվել նախապատրաստված նյութերով քրեական գործի հարուցումը մերժելու մասին:

Չնայած այն հանգամանքին, որ շատ դեպքերում քարոզարշավի խոչընդոտումն իրականացվել է պարզական ռեսուրսի կիրառման միջոցով, դրա հետ մեկտեղ ի տարբերություն 2012թ. խորհրդարանական ընտրությունների ընթացքում արձանագրված քարոզարշավի խոչընդոտման որոշ առանձնահատուկ դեպքերին (օրինակ՝ պատգամավորի թեկնածու Բաբկեն Գարոյանին մարմնական վնասվածքներ պատճառելը)՝ 2013թ. նախագահական ընտրությունների ընթացքում թեկնածուների նկատմամբ կիրառված կոպիտ բռնության նմանատիպ դեպքեր չեն գրանցվել:

Այնուամենայնիվ, համաձայն պաշտոնական տվյալների՝ 2013 թվականի նախագահական ընտրությունների նախընտրական քարոզչության խոչընդոտման 16 դեպք է գրանցվել: Ոստիկանությունից հայտնել են, որ այդ դեպքերի կապակցությամբ ձեռնարկվել են օպերատիվ-միջոցառումներ, ինչի արդյունքում այդ դեպքերի հետ ենթադրաբար առնչություն ունեցող անձանցից վերցվել են բացատրություններ, որոնցով սակայն հնարավոր չի եղել պարզել հանցադեպի առկայությունը և/կամ իրավախախտումը կատարած անձանց ինքնությունը, հետևապես բոլոր այդ դեպքերով կայացվել են քրեական գործերի հարուցումը մերժելու մասին որոշումներ և այդ որոշումներից ոչ մեկը չի բողոքարկվել:

Քարոզարշավի լուսաբանում

Ըստ ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ ԸՄԴԱ-ի կողմից հայտնած տեղեկությունների՝ 2013թ. նախագահական ընտրությունների նախընտրական փուլի ընթացքում լրատվամիջոցները էական ուշադրություն են դարձրել քաղաքական և ընտրություններին առնչվող տեղեկատվությանը, և իրենց կողմից մշտադիտարկվող լրատվամիջոցները կանոնավոր լուսաբանել են բոլոր թեկնածուներին: Միաժամանակ վերջիններս նշել են, որ քարոզարշավի լուսաբանումը հիմնականում ֆորմալ բնույթ է կրել և չի ունեցել վերլուծական մեկնաբանություն, և թեկնածուների միջև բանավեճեր չեն կազմակերպվել: Ընտրությունների լուսաբանման վերաբերյալ քաղաքական ուժերը բացասական կարծիք չեն հայտնել:

Ոլորտի համապատասխան հասարակական կազմակերպությունները նույնպես բացասական գնահատական չեն հայտնել:

Երևանի մամուլի ակումբի 2013թ. փետրվարի 18-ի նախագահական ընտրությունների լուսաբանման մշտադիտարկման հաշվետվության համաձայն՝ հեռարձակվող ՁԼՄ-ները, ընդհանուր առմամբ, խտրականություն կամ բացահայտ կողմնակալ վերաբերմունք չեն դրսևորել ՀՀ նախագահի նախկին թեկնածուների նկատմամբ: Հիմնականում հավասար պայմաններ են ապահովվել ընտրական գլխավոր թեկնածուների և նրանց սատարող քաղաքական ուժերի ծրագրերին ու հայացքներին ծանոթացնելու համար: Հաշվետվությունում նշվել է նաև, որ եթե 2012թ. խորհրդարանական ընտրություններին հավասարակշիռ լուսաբանում ապահովվել է միայն պաշտոնական նախընտրական քարոզչության ժամանակ, ապա այս անգամ նման գնահատական կարելի է տալ նաև դրան նախորդած ժամանակաշրջանին: Դրա հետ մեկտեղ, տեղեկատվական և տեղեկատվական-վերլուծական հաղորդումներում գործադիր իշխանության մարմինների ներկայացուցիչներին խոսքի հաճախակի տրամադրումը (6,337 անգամ միասին վերցրած բոլոր կուսակցությունների ներկայացուցիչներին 4,874 դեպքերի դիմաց) խոսում է 2012թ. հոկտեմբեր-դեկտեմբեր ամիսներին կառավարող կոալիցիայի ունեցած որոշակի տեղեկատվական առավելության մասին:

Համեմատության համար կարելի է նշել 2008թ. նախագահական ընտրությունները, որի նախընտրական քարոզչության ընթացքում արձանագրված հիմնական ընտրախախտումներից է եղել որոշ թեկնածուների քարոզարշավի ոչ բավարար լուսաբանումը հանրային հեռուստառադիոընկերությունների կողմից, իսկ 2012թ. խորհրդարանական ընտրությունների, ինչպես նաև 2013թ. նախագահական ընտրությունների ընթացքում նախընտրական քարոզարշավի լուսաբանման և խոսքի ազատության սահմանափակման վերաբերյալ նախագահի թեկնածուները որևէ բացասական կարծիք չեն հայտնել, Պաշտպանը որևէ բողոք և/կամ ահազանգ չի ստացել, ինչպես նաև զանգվածային լրատվության միջոցներով ոչինչ չի հրապարակվել:

ԷԱԿԱՆ ԸՆՏՐԱԽԱԽՏՈՒՄՆԵՐ

Ըստ ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ ԸՄԴԱ-ի կողմից հայտնած տեղեկությունների՝ դիտարկված 75 ընտրական տեղամասերից գերակշիռ մեծամասնությունում տեղամասի բացման ընթացակարգերը, ընդհանուր առմամբ, գնահատվել են դրական: Չնայած քվեարկությունը եղել է պատշաճ և լավ կազմակերպված, 970 դիտարկումների գերակշռող մասում ԸՄԴԱ-ի դիտորդները բացասական են գնահատել դիտարկված բոլոր դեպքերի 5 տոկոսը՝ հիմնականում անտեղի միջամտելու և որոշ դեպքում լուրջ ընտրախախտումների պատճառով: Արձանագրված լուրջ իրավախախտումներից է եղել հետևյալը. ոչ պատշաճ կարգով կնքված ընտրատուփերի առկայություն (5 տոկոս), ընտրողների ուղղորդում ընտրատեղամասերից դուրս ՀՀԿ-ի կողմնակիցների կողմից, ինչպես նաև գործող նախագահի անձանց կողմից ՏՀՀ-ների աշխատանքի միջամտում կամ ուղղորդում (դիտարկված տեղամասերի 7 տոկոսում): Միջազգային դիտորդները նաև զեկուցել են ընտրատուփի լցումման հնարավոր չորս դեպքերի մասին:

ՀՀ գլխավոր դատախազության և ՀՀ ոստիկանության կողմից ստացված տեղեկատվության համաձայն՝ նախընտրական փուլում ստացվել և քննարկվել է ընդհանուր թվով 96 դեպք, որոնցից 88-ը հանդիսացել են հաղորդումներ (71-ը՝ ՁԼՄ-ներում գետեղված հրապարակումներից): Համաձայն Պաշտպանին հայտնած տեղեկությունների՝

96 դեպքից 63-ը վերաբերել են ընտրակաշառք բաժանելուն, 16-ը՝ քարոզարշավը խոչընդոտելուն, 12-ը՝ ընտրողի կամքի ազատ իրականացմանը խոչընդոտելուն, 1-ը՝ գրպարտող տեղեկություններ տարածելուն, 3-ը՝ ընտրությունների կամ քվեարկության արդյունքները կեղծելուն և 1-ը՝ քվեարկության նախորդող օրը քարոզչություն կատարելուն: Ստացված հաղորդումներից 80-ով ՀՀ գլխավոր դատախազությունը կայացրել է որոշում քրեական գործի հարուցումը մերժելու մասին: Վերոնշյալ հաղորդումների վերաբերյալ որոշ մանրամասներ ներկայացված են ստորև:

Միաժամանակ, ՀՀ գլխավոր դատախազության կողմից հայտնած տեղեկատվության համաձայն՝ քվեարկության օրը և դրանից հետո ընդհանուր թվով ստացվել է 159 հաղորդում, որից 116-ը՝ ՁԼՄ-ներում զետեղված հրապարակումներից, 5-ը՝ ՀՀ գլխավոր դատախազության «Թեժ գիծ» ծառայությամբ:

Քվեարկության օրը և հետընտրական ժամանակահատվածում տեղի ունեցած ընտրախախտումների վերաբերյալ Ոստիկանության կողմից քննարկվել են ընդհանուր առմամբ 187 դեպքեր: Մեկից ավելի անգամ կամ այլ անձի փոխարեն ընտրելու 20 ահազանգերից 4 հարուցված քրեական գործերը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել են դատարաններ, 3 քրեական գործ դեռ չի ավարտվել /ընթանում է նախաքննություն/:

Քվեարկության օրը Պաշտպանը ստացել է ընտրակաշառքի, կրկնակի քվեարկության և քվեատուփերի լցուման 25 ահազանգեր, որոնցից 10-ը (ներկայացված են ստորև) առերևույթ հիմնավոր լինելու կապակցությամբ փոխանցվել են Ոստիկանությանը:

Ընտրակաշառքի բաժանում

Ընտրությունների ընթացքում, բացի թեկնածուների նախընտրական շտաբի անդամների կողմից ընտրակաշառք առաջարկելուց, ստացվել են ահազանգեր, որոնց համաձայն՝ ընտրակաշառք է բաժանվել նաև վարչական ռեսուրսի կիրառման միջոցով: Մասնավորապես, Վերին Գետաշեն գյուղի բնակիչը հայտնել է, որ իրենց գյուղապետը հավաքում է քաղաքացիների անձնագրերը և բաժանում 10.000-ական ՀՀ դրամ: Նախապատրաստված նյութերով բացատրություններ են վերցվել, կատարվել են օպերատիվ և այլ ստուգողական գործողություններ, համապատասխան գրությամբ հարցում է կատարվել ՀՀ Նախագահի նախկին թեկնածու Բաֆֆի Հովհաննիսյանի նախընտրական շտաբից, որի 16.02.2013թ. գրությամբ հայտնվել է, որ վերոնշյալ փաստի ստացման եղանակը (անձնապես, հեռախոսով և այլն), ժամանակը իրենց մոտ արձանագրված չէ և կոնկրետ տվյալներ չունեն տեղեկությունը հայտնած անձի վերաբերյալ: Նյութերի նախապատրաստման ընթացքում ՀՀ ոստիկանության Մարտունու բաժնի համապատասխան ծառայության կողմից ձեռնարկված օպերատիվ միջոցառումների արդյունքում ևս չեն հիմնավորվել Վերին Գետաշեն համայնքի ղեկավար Ռ.Ղուկասյանի կողմից քաղաքացիների անձնագրերը հավաքելու և գումարներ բաժանելու հանգամանքը: Նախապատրաստված նյութերով հաղորդումների մեջ նշված հանգամանքները չեն հիմնավորվել, ուստի որոշում է կայացվել նախապատրաստված նյութերով քրեական գործի հարուցումը մերժելու մասին՝ հանցագործության դեպքի բացակայության հիմքով:

Մեկ այլ ահազանգով քաղաքացի Ավագ Մեծլումյանը /Սյունիքի մարզ, ք. Սիսիան/ հայտնել է, որ թիվ 37/15 ընտրատեղամասի դիմաց քաղաքապետը ընտրակաշառք է բաժանում: Նյութերի նախապատրաստման ընթացքում Ավագ Մեծլումյանը նշել է, որ իր ասածները ճիշտ չեն հասկացվել, հրաժարվել է քաղաքապետի կամ մեկ այլ անձի կողմից

ընտրակաշառք բաժանելու մասին հաղորդում տալուց: Միաժամանակ, Միսիանի քաղաքապետ Ադասի Հակոբջանյանը բացատրություն է տվել, որ ՀՀ նախագահական ընտրությունների օրը Միսիան քաղաքի բնակիչ Ավագ Մեծումյանին չի տեսել, երբևէ նրան կամ որևէ մեկին ընտրակաշառք չի բաժանել: Նախապատրաստված նյութերով հաղորդումների մեջ նշված հանգամանքները չեն հիմնավորվել, ուստի որոշում է կայացվել նախապատրաստված նյութերով քրեական գործի հարուցումը մերժելու մասին՝ հանցագործության դեպքի բացակայության հիմքով: Այսինքն, իրավապահ մարմինների կողմից օպերատիվ միջոցառումներ չեն ձեռնարկվել պարզելու, թե ինչի համար անձը էապես տարբերվող տեղեկություններ է հայտնել նման կարճ ժամանակահատվածում: Պարզ չէ նաև ինչի համար չեն ներգրավվել գործի ելքով չշահագրգռված բոլոր պատշաճ անձինք՝ անհրաժեշտ տեղեկություններ իրավապահ մարմիններին հայտնելու և դեպքի բազմակողմանիորեն ուսումնասիրության համար:

Քաղաքացին (ինքնությունը չի ցանկացել հայտնել նույնիսկ Պաշտպանին, կա միայն հեռախոսահամար) հայտնել է, որ թիվ 141 դպրոցի մոտ ընտրակաշառք են բաժանել: Նախապատրաստված նյութերով բացատրություններ են վերցվել թիվ 141 դպրոցում տեղակայված թիվ 2/09 ընտրական տեղամասում ծառայություն իրականացրած, ՀՀ ոստիկանության Նոր Նորքի բաժնի օպերիվագոր՝ Նարեկ Հունանյանից և թիվ 2/09 ընտրական տեղամասի հանձնաժողովի նախագահ՝ Անահիտ Հովհաննիսյանից, որոնք հերքել են Երևանի թիվ 141 դպրոցի մոտ ընտրակաշառք բաժանելու հանգամանքը: Նախապատրաստված նյութերով հաղորդումների մեջ նշված հանգամանքները չեն հիմնավորվել, ուստի որոշում է կայացվել նախապատրաստված նյութերով քրեական գործի հարուցումը մերժելու մասին՝ հանցագործության դեպքի բացակայության հիմքով:

Քաղաքացի Թ.Ն. (ինքնությունը հայտնել է միայն Պաշտպանին) հայտնել է, որ թիվ 50 դպրոցում տեղակայված թիվ 8/30 և թիվ 8/31 ընտրատեղամասերում ընտրակաշառք են բաժանում: Բացատրություններ են վերցվել թիվ 8/30 ընտրատեղամասի հանձնաժողովի նախագահ Գյուլնարա Միրիջանյանից, թիվ 8/31 ընտրատեղամասի հանձնաժողովի նախագահ Յուրիկ Ղազարյանից, հանձնաժողովի այլ անդամներից, ինչպես նաև՝ վերը նշված դպրոցի պահակ Սանասար Ավդալյանից, դպրոցին հարակից տարածքում բնակվող Սամվել Գևորգյանից, Անժիկ Գալստյանից և Լիդա Հայրապետյանից, որոնք հերքել են որևէ մեկի կողմից ընտրակաշառք բաժանելու հանգամանքը: Նախապատրաստված նյութերով հաղորդումների մեջ նշված հանգամանքները չեն հիմնավորվել, ուստի որոշում է կայացվել նախապատրաստված նյութերով քրեական գործի հարուցումը մերժելու մասին՝ հանցագործության դեպքի բացակայության հիմքով:

Քաղաքացի Սուրեն Մանուչարյանը /բնակվող Տավուշի մարզ, գ. Վարազավան/ հայտնել է, որ անձամբ իրեն տվել են 5000 ՀՀ դրամ: Ինքը գումարը չի ծախսել, պահել է ծրարի մեջ՝ որպես իրեղեն ապացույց: Պաշտպանի ներկայացուցիչները նրան տեղեկացրել են, որ ընտրակաշառքի մասին ինքնակամ տեղեկացնելը հնարավորություն է տալիս ազատվել քրեական պատասխանատվությունից: Վերջինս համաձայնել է համագործակցել Ոստիկանության հետ: Նշված դեպքի առթիվ ՀՀ հատուկ քննչական ծառայությունում ՀՀ քրեական օրենսգրքի 154.2-րդ հոդվածի 2-րդ մասի հատկանիշներով հարուցվել է թիվ 62201413 քրեական գործը: 2013 թվականի փետրվարի 28-ին Սուրեն Մանուչարյանը, որպես վկա հարցաքննվելիս, ժխտել է Սամվել Մանուչարյանի կողմից իրեն որպես ընտրակաշառք գումար տալու հանգամանքը: Նա հայտնել է, որ 2013 թվականի փետրվարին Սամվել Մանուչարյանն իրեն կանչել է գյուղապետարան ու հայտնել, որ ինքն արդեն ընդգրկվել է գյուղի ընտրողների ցուցակում: Ըստ Ս. Մանուչարյանի նա այդ պահին

օգտվելով առիթից խնդրել է համայնքի ղեկավարին լուծել իր տան գազիֆիկացնելու և ջրագիծ անցկացնելու հարցը, սակայն Մամվել Մանուչարյանը նորից մերժելով իր խնդրանքը, առաջարկել է մեկնել շրջկենտրոն՝ ք. Բերդ, ու դիմել պատկան մարմիններին, և քանի որ Սուրեն Մանուչարյանը հայտնել էր, որ գումար չունի, Մամվել Մանուչարյանը իրեն տվել է 5.000 դրամ: Մի քանի օր անց՝ փետրվարի 17-ին, երբ նա գտնվել է տանը և մի քանի բաժակ օղի խմել, հանկարծ ռադիոյով հայտարարություն է լսել այն մասին, թե ընտրախախտումների յուրաքանչյուր դեպքում քաղաքացիները կարող են ահազանգել Մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակի թեժ գծին: Դժգոհ լինելով Մամվել Մանուչարյանից, որ վերջինս չլուծեց իր կենցաղային խնդիրները՝ նրան վարկաբեկելու նպատակով Ս. Մանուչարյանը զանգահարել էր թեժ գծի հեռախոսահամարով ու հայտնել, որ իրեն Վարագավան համայնքի ղեկավարը տվել է 5.000 դրամ ընտրակաշառք: Նախաքննությամբ պարզվել է, որ Տավուշի մարզի Վարագավան համայնքի ղեկավար Մամվել Մանուչարյանը Սուրեն Մանուչարյանին որպես ընտրակաշառք գումար չի տվել, այսինքն՝ նրա արարքում բացակայում է ՀՀ քրեական օրենսգրքի 154.2 հոդվածի 2-րդ մասով նախատեսված հանցակազմը: Արդյունքում կայացվել է որոշում քրեական գործով վարույթը կարճելու մասին, քանի որ Մամվել Մանուչարյանի արարքում բացակայել է հանցակազմը: Չնայած այն հանգամանքին, որ հաղորդում տված 78-ամյա Սուրեն Մանուչարյանի արարքում առկա է քրեորեն հետապնդելի արարքի տարրեր, այն է՝ ՀՀ քրեական օրենսգրքի 333-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված՝ սուտ մատնություն հանցակազմը, այնուամենայնիվ քրեական վարույթ իրականացնող մարմինը հաշվի առնելով, որ Ս. Մանուչարյանը առաջին անգամ կատարել է ոչ մեծ ծանրության հանցագործություն, որը կատարելուց հետո հարցաքննության ժամանակ հանդես է եկել մեղայականով ու աջակցել է օբյեկտիվ ճշմարտության բացահայտմանը և հաշվի առնելով քրեական օրենսգրքի դրույթները՝ նրա նկատմամբ քրեական հետապնդում չիրականացնելու մասին որոշում է կայացվել: Սակայն իրավապահ մարմինները բավարար խորությամբ այդպես էլ չեն ուսումնասիրել Մամվել Մանուչարյանի կողմից հենց փետրվար ամսին 5.000 դրամի փոխանցումը Սուրեն Մանուչարյանին: Հարկավոր էր հաշվի առնել, Մամվել Մանուչարյանի ենթադրաբար կատարված արարքի ծանրությունը և բնույթը և այն, որ պատահական չէ, որ Օրենսդիրը նախատեսել է, որ նման դեպքերում քրեական հետապնդումն իրականացվում է հանրային կարգով: Այդ իսկ պատճառով գտնում ենք, որ հարկավոր էր նաև գործին ներգավել այլ անձանց նույնպես՝ բազմակողմանիությունն ապահովելու համար:

Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակը 18.02.2013 թվականին Լոռու մարզի դատախազություն է ներկայացրել Ե/2013-1502/94 հաղորդումը՝ Վանաձոր քաղաքի Տարոն-2 թաղամասում <<Հայաստանի էլ. ցանցեր>> տնօրենի կողմից ընտրակաշառք բաժանելու վերաբերյալ: Ոստիկանության կողմից իրականացված օպերատիվ-միջոցառումների արդյունքում 22.02.2013 թվականին Լոռու մարզի քննչական բաժնի կողմից ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով որոշում է կայացվել քրեական գործի հարուցումը մերժելու մասին՝ հանցադեպի բացակայության պատճառաբանությամբ: Ըստ մեզ հայտնած տեղեկությունների նշված ահազանգի կապակցությամբ չեն իրականացվել բավարար ուսումնասիրություններ, մասնավորապես, չեն ներգրավվել գործի ելքով չշահագրգռված բոլոր պատշաճ անձինք

2012թ. խորհրդարանական ընտրությունների ընթացքում ընտրակաշառք բաժանելու վերաբերյալ Ոստիկանությունն ստացված 74 ահազանգերից 67 դեպքերով Ոստիկանությունից հայտնել են, որ ձեռնարկվել են օպերատիվ-միջոցառումներ, ինչի

արդյունքում հարուցվել են ընտրակաշառք բաժանելու 8 գործեր: 2013թ նախագահական ընտրությունների ընթացքում Ոստիկանության կողմից քննարկվել են ընտրակաշառքի վերաբերյալ 100 ահազանգեր, դրանց կապակցությամբ ձեռնարկվել են օպերատիվ-հետախուզական միջոցառումներ, սակայն արդյունքում կայացվել են որոշումներ քրեական գործերի հարուցումը մերժելու կամ կարճելու մասին :

Կրկնակի քվեարկություն

Միջազգային դիտորդական առաքելություն իրականացնող կազմակերպություններն արձանագրել են ընտրացուցակներում մի շարք նույնանման ստորագրությունների առկայության (3 տոկոս) և բազմակի քվեարկության դեպքեր (2 տոկոս): Ընտրացուցակներում այլ անձի փոխարեն ստորագրելու դեպքերի մասին Պաշտպանի կողմից ստացված ահազանգերը նույնպես համապատասխանաբար փոխանցվել են Ոստիկանություն:

Մասնավորապես, քաղաքացի Ժաննա Հովակիմյանը հայտնել է, որ թիվ 8/13 ընտրատեղամասում իր և իր քրոջ փոխարեն ստորագրված է եղել, և նրանցից մեկին ուղղորդել են, որ քվեարկի մայրիկի՝ Լուիզա Հովակիմյանի փոխարեն: Հարցում է կատարվել ոստիկանության ԱՎՎ Մալաթիայի անձնագրային բաժանմունք և նույն օրը ստացվել է պատասխան գրություն այն մասին, որ Բաբաջանյան 18 շենքի 13 բնակարանի հասցեն պատկանում է Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի Բաբաջանյան 42 հասցեում տեղակայված 8/12 ընտրատեղամասին, այլ ոչ թե 8/13: Հիմնավորվել է, որ Ժաննա Հովակիմյանը և Լուիզա Հովակիմյանը 18.02.2013թ. գնացել են թիվ 7/1 ընտրատեղամաս և հայտնաբերել, որ ընտրական ցուցակներում իրենց անվան դիմաց առկա են ստորագրություններ: Ընտրական տեղամասի հանձնաժողովի նախագահը պարզել է, որ տեղի է ունեցել թյուրիմացություն՝ այլ քաղաքացիներ են սխալմամբ ստորագրել, սակայն նույն պահին շտկել է վրիպումը և թույլ տվել Ժաննա և Լուիզա Հովակիմյաններին իրականացնել իրենց ընտրական իրավունքը:

Քաղաքացի Ստեփան Ամիրխանյանը հայտնել է, որ թիվ 1/13 ընտրատեղամասում իր դստեր՝ Արևիկ Ամիրխանյանի անվան դիմաց առկա է եղել ստորագրություն: Դեպքի կապակցությամբ բացատրություններ են վերցվել թիվ 1/13 ընտրական տեղամասի նախագահ Գոռ Մակարյանից և քարտուղար Կարինե Մանուկյանից, որի արդյունքում հաստատվել է, որ ընտրացուցակների մեջ Արևիկ Ամիրխանյանի անվանից մի քանի պյունակ դեպի վերև առկա է նույն շենքի թիվ 16 բնակարանի բնակչուհի՝ Արևիկ Ասատրյանի անուն ազգանունը, որի բնակության հեռախոսահամարը ճշտելով հրավիրել են ընտրատեղամաս և պարզել, որ վերջինս մասնակցել է ընտրությանը, սակայն իր անվան դիմաց ստորագրելու փոխարեն թյուրիմացաբար ստորագրել է Արևիկ Ամիրխանյանի անվան դիմաց:

Վերոնշյալ գործերով կայացվել են որոշումներ նախապատրաստված նյութերով քրեական գործերի հարուցումը մերժելու մասին՝ հանցագործության դեպքի բացակայության հիմքով:

Ստացվել է հաղորդում 9/18 ընտրատեղամասում այլ անձի փոխարեն քվեարկելու վերաբերյալ, որում, մասնավորապես, նշվել է, որ 2013թ. փետրվարի 18-ին, ժամը 17:15-ին թիվ 9/18 ընտրատեղամասում մի քաղաքացի փորձել է քվեարկել Գուրգեն Արտաշեսի Ղազախեցյանի անձնագրով: Բացատրություններ են վերցվել նախագահի նախկին թեկնածու Ր.Հովհաննիսյանի վստահված անձ Ա.Սարգսյանից և հանձնաժողովի նախագահ Ա.Ներսիսյանից, որին Ա.Սարգսյանը նաև դիմում էր ներկայացրել: Ա. Ներսիսյանը հայտնել

է, որ նշված օրը եղել է ընտրատեղամասում և իրեն է դիմել Աբգար Սարգսյանը վերը նշված հարցով և այդ կապակցությամբ, ինչպես Ա.Ներսիսյանը նշում է իր բացատրությամբ, հրավիրվել է հանձնաժողովի խորհրդակցություն, որի վերաբերյալ որոշման արձանագրության պատճեն կցվել է նախապատրաստվող նյութերին, որտեղ նշված է, որ քաղաքացու անձնագիրը ետ է վերադարձվել իր որդուն՝ քաղաքացուն հիվանդանոց տեղափոխելու նպատակով: Բացատրություն է վերցվել նաև անձնագրի իրական տիրոջից՝ Գուրգեն Ղազախեցյանի որդի Դավիթ Ղազախեցյանից, որը նշել է իր բացատրությամբ, որ իր հայրը դեռևս 2013թ. հունվար ամսից մեկնել է ՌԴ և իր անձնագիրը ուղարկել է Երևան՝ իր որդի Դ.Ղազախեցյանին՝ կենցաղային հարցերը կարգավորելու նպատակով: Վերջինս իր հոր անձնագիրը տարել է պատճենահանման և ճանապարհին կորցրել է: Անհայտ անձը գտնելով Գ.Ղազախեցյանի անձնագիրը փորձել է մասնակցել ընտրությանը, սակայն նրան չի հաջողվել ընտրել: Անհայտ անձի տվյալները գրանցվել են ընտրատեղամասում համապատասխան մատյանում, որտեղ առկա է նաև անհայտ անձի ստորագրությունը: Նկատի ունենալով, որ նախապատրաստված նյութերում առկա էին ՀՀ քրեական օրենսգրքի 34 և 153-րդ հոդվածներով նախատեսված հանցագործության հատկանիշներ՝ 05.06.2013 թվականի որոշմամբ դեպքի առթիվ հարուցվել է թիվ 13127513 քրեական գործը և կատարվում է նախաքննություն:

Քաղաքացի Տիգրան Ալեքսանյանը ՀՀ Ոստիկանությանը հայտնել է, որ այցելելով թիվ 1/35 ընտրատեղամաս, պարզել է, որ իր ընտանիքի բոլոր անդամներն արդեն իսկ մասնակցել են ընտրությանը, որը սակայն, ըստ նրա, չէր համապատասխանում իրականությանը: Ոստիկանության կողմից հայտնած տեղեկությունների համաձայն, այդ խնդրին արձագանքել են ընտրական տեղամասի հանձնաժողովի անդամները և ապահովել Տ. Ալեքսանյանի և նրա ընտանիքի անդամների ընտրական իրավունքի իրականացումը: Սակայն Ոստիկանության կողմից այդ փաստի առթիվ քրեական գործ չի հարուցվել: Արդյունքում չեն իրականացվել բոլոր քննչական գործողությունները պարզելու համար, թե արդյոք այս դեպքում առկա էր հանցակազմը, թե դա բացակայում էր: Հարկավոր էր հաշվի առնել, որ այս դեպքում անհրաժեշտ էր ոչ միայն ապահովել Տ. Ալեքսանյանի և նրա ընտանիքի անդամների ընտրական իրավունքի իրականացումը, այլ նաև կանխարգելել նման միտումնավոր կամ առանց միտումի դեպքերը՝ բազմակողմանիորեն ուսումնասիրելու և բացահայտելու միջոցով:

Ոստիկանության կողմից քննված 20 դեպքերից 16-ի վերաբերյալ կայացվել են քրեական գործի հարուցումը մերժելու մասին որոշումներ: Դատախազության հայտնած տեղեկատվության համաձայն՝ մեկից ավելի անգամ կամ այլ անձի փոխարեն ընտրելու դեպքերի վերաբերյալ հարուցված 4 քրեական գործեր մեղադրական եզրակացությամբ ուղարկվել են դատարաններ:

Վարչական ռեսուրսի օգտագործում

Արձանագրվել են բողոքներ, որոնք վերաբերել են նախընտրական քարոզարշավի իրականացման ընթացքում թեկնածուների, պետական և տեղական ինքնակառավարման մարմինների պաշտոնատար անձանց կողմից վարչական ռեսուրսների չարաշահմանը: Ընտրական օրենսգրքը արգելում է նախընտրական քարոզչություն կատարել և ցանկացած բնույթի քարոզչական նյութ տարածել պետական և տեղական ինքնակառավարման մարմիններին, ինչպես նաև պետական և համայնքային ծառայողներին, ուսումնական հաստատությունների մանկավարժական կազմի աշխատողներին՝ իրենց լիազորություններն իրականացնելիս: Բոլոր թեկնածուները, բացի

գործող Նախագահից, հրապարակավ իրենց մտահոգություններ են արտահայտել վարչական ռեսուրսի չարաշահման դեպքերի կապակցությամբ: Ըստ միջազգային կազմակերպությունների կողմից ներկայացված զեկույցների՝ քարոզարշավի կանոնակարգումները չեն ապահովել բավարար պաշտպանություն վարչական ռեսուրսի չարաշահումից և չեն նպաստել պետության և իշխող կուսակցության միջև հստակ բաժանմանը: Վարչական ռեսուրսի օգտագործման դեպքերը խիստ մտահոգիչ են նաև այնքանով, որ դրանք կասկածի տակ են դնում պետության և քաղաքական կուսակցության բաժանման հարցը՝ ամրագրված ԵԱՀԿ կոպենհագենյան փաստաթղթի 5.4 պարբերության մեջ: ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ ԸՄԴԱ երկարաժամկետ դիտորդները փաստել են վարչական ռեսուրսի չարաշահման դեպքեր ի օգուտ գործող Նախագահի: ՀՀ Նախագահի նախկին թեկնածու Անդրիաս Ղուկասյանը գործող Նախագահի թեկնածությունը անվավեր ճանաչելու վերաբերյալ դիմում է ներկայացրել ՀՀ ԿԸՀ, սակայն այդ դիմումի բավարարումը մերժվել է: Համաձայն չլինելով այդ որոշման հետ՝ հունվարի 21-ին Ա. Ղուկասյանը հայտարարել էր հացադուլ ամբողջ քարոզարշավի ընթացքում:

Միջազգային կազմակերպությունների երկարաժամկետ դիտորդները փաստել են վարչական ռեսուրսի չարաշահման դեպքերի առկայություն՝ ի օգուտ գործող Նախագահի: Վերջիններիս պնդմամբ դա արտահայտվել է հետևյալ ձևերով. վերադասների կողմից պետական ծառայողների վրա ճնշման գործադրում՝ քարոզչական միջոցառումներին մասնակցելու նպատակով (13 դեպք), պետական ծառայողների ներգրավում ընտրական քարոզարշավին (16 դեպք), նախընտրական շտաբերի տեղակայում այն շինություններում, որտեղ նաև գտնվում են պետական և տեղական ինքնակառավարման մարմինները և ընտրական հանձնաժողովները, պետական միջոցների օգտագործում քարոզչության նպատակով (11 դեպք):

Այսպես, համաձայն Ոստիկանության կողմից տրամադրված տեղեկատվության ինտերնետային կայքէջերից մեկում հաղորդագրություն է տարածվել, որ Քարաձոր գյուղում վարչական ռեսուրսի չարաշահման դեպքեր են արձանագրվել: Ոստիկանության կողմից իրականացրած միջոցառումների արդյունքում պարզվել է, որ ՀՀ Նախագահի թեկնածու Բ.Հովհաննիսյանի շտաբը հայտնել էր, որ Քարաձոր գյուղի գյուղապետ Ա.Մատինյանը զբաղվում է քարոզչությամբ: Սակայն, այդ գործի վերաբերյալ կատարված ուսումնասիրությունների արդյունքում որոշում է կայացվել քրեական գործի հարուցումը մերժելու մասին՝ հանցադեպի բացակայության հիմքով:

ՀՀ գլխավոր դատախազության և Ոստիկանության կողմից հայտնած տեղեկությունների համաձայն վարչական ռեսուրսի չարաշահման դեպքերի վերաբերյալ որևէ անձի նկատմամբ մեղադրանք չի առաջադրվել, ինչպես նաև որևէ անձ պատասխանատվության չի ենթարկվել:

Վարչական ռեսուրսի օգտագործման վերաբերյալ խնդիրները մեր կողմից արձանագրվել են նաև Մարդու իրավունքների պաշտպանի թե 2012 թվականի խորհրդարանական ընտրությունների, և թե 2008 թվականի Նախագահական ընտրությունների վերաբերյալ արտահերթ զեկույցներում:

Ընտրական իրավունքի ազատ իրականացման խոչընդոտում

Դիտորդական առաքելություն իրականացնող միջազգային կազմակերպությունների կողմից արձանագրվել են նաև ընտրողների կամքի վրա ազդելու փորձերի (2 տոկոս) և ընտրողներին սպառնալու ու նրանց վրա ճնշում գործադրելու դեպքեր (2 և 1 տոկոս համապատասխանաբար):

Ի տարբերություն 2012թ. խորհրդարանական ընտրությունների ընթացքում քաղաքացիներին տեղամասային կենտրոններ անվճար տեղափոխելու և ընտրողին թեկնածուներից մեկի օգտին քվեարկել հարկադրելու վերաբերյալ ստացված շուրջ 24 ահազանգերի՝ 2013թ. նախագահական ընտրությունների ընթացքում Ոստիկանության կողմից քննարկվել են 27 դեպքեր:

Այսպես, 2013թ. փետրվարի 18-ին ինտերնետային կայքէջերից մեկում տեղադրված «Բաֆֆի Հովհաննիսյանի ընտրական շտաբի արձանագրված խախտումների ամփոփագիրը» հոդվածի 33-րդ կետում նշվել է. «քաղ. Ասատուր Պապյանի վկայությամբ՝ Ջովունի գյուղի գյուղապետը և նրա մարդիկ ընտրողներին ստիպում են բաց քվեարկել Ս.Սարգսյանի օգտին»: Նյութերի նախապատրաստման ընթացքում «Ժառանգություն» կուսակցության ներկայացուցիչ, 27/15 ընտրատեղամասի հանձնաժողովի անդամ Համլետ Կյուրեղյանը բացատրություն է տվել, որ ընտրության ընթացքում քաղաքացիներին որևէ թեկնածուին ընտրելու հարցում ուղղորդում, պարտադրանք չի եղել, ընտրակաշառք բաժանելու դեպքեր կամ խոստումներ չեն եղել: Նույնաբովանդակ բացատրություններ են տվել Ջովունու գյուղապետ, ՀՀԿ անդամ Սերժիկ Ավետիսյանը, ԲՀԿ ներկայացուցիչ, 27/14 տեղամասի քարտուղար Սարգիս Ղազարյանը և Ջովունի գյուղի բնակիչ Ասատուր Պապյանը: 2013թ. փետրվարի 20-ին ՀՀ Նախագահի նախկին թեկնածու Բ.Հովհաննիսյանի ընտրական կենտրոնական շտաբ է ուղարկվել գրություն, որով պահանջվել է տրամադրել հանցագործության մասին հաղորդումը հաստատող նյութերը: 2013թ. փետրվարի 21-ին Բ.Հովհաննիսյանի կենտրոնական շտաբից ստացվել է պատասխան, որ գրության մեջ նշված ընտրախախտումների վերաբերյալ հաղորդագրությունների ստացման ժամանակը և եղանակը (անձնապես, հեռախոսով և այլն) կոնկրետ արձանագրված չի եղել և տվյալներ չեն ունեցել տեղեկություն հայտնած անձանց վերաբերյալ: Նկատի ունենալով, որ նախապատրաստված նյութերով Ջովունի գյուղում Սերժ Սարգսյանի օգտին անձամբ կամ միջնորդի միջոցով կաշառք տալով քվեարկելուն հարկադրելու հանցագործության դեպքը չի հիմնավորվել, որոշում է կայացվել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախապատրաստված նյութերով քրեական գործի հարուցումը մերժել՝ հանցագործության դեպքի բացակայության պատճառաբանությամբ:

Լրագրողների, դիտորդների, վստահված անձանց գործունեության խոչընդոտում

Թեկնածուի վստահված անձի, դիտորդի, ՋԼՄ-ի ներկայացուցչի, կուսակցության լիազորված անձի լիազորությունների իրականացմանը խոչընդոտելու վերաբերյալ ՀՀ Ոստիկանության կողմից քննարկվել և քննարկման փուլում են գտնվում 12 դեպքեր:

2013 թվականի փետրվարի 18-ին Էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների դատախազությունից գրությամբ Էրեբունու քննչական բաժին է ստացվել ինտերնետային կայքերից մեկում տեղադրված «Խոչընդոտել են լրագրողի աշխատանքը և հայհոյել» վերտառությամբ տեղեկությունը: Իսկ նույն օրը Ժ.20:00-ին լրագրող Մարինե Խառատյանը ՀՀ ոստիկանության Երևան քաղաքի վարչությունում հաղորդում է տվել այն մասին, որ նույն օրը, ժամը 18:00-ից մինչև ժամը 19:00-ն ընկած ժամանակահատվածում Խորենացու փող. 217/19 հասցեում տեղակայված ՀՀ նախագահի թեկնածու Ս. Սարգսյանի նախընտրական շտաբի մոտ 10-15 անձինք խոչընդոտել են իր և լրագրող Գայանե Սարիբեկյանի մասնագիտական օրինական գործունեությունը: Նշված նյութերը, որպես նույնաբովանդակ, միացվել են և ըստ քննչական ենթակայության փետրվարի 21-ին ուղարկվել են ՀՀ Հատուկ քննչական ծառայություն: Վերջինս՝ գործը խորը

ուսումնասիրելուց և մի շարք քննչական գործողություններ կատարելուց հետո հանցակազմի և հանցագործության դեպքի բացակայության հիմքով կարճել է քրեական գործը:

Թիվ 17/01 ընտրատեղամասում վստահված անձանց կողմից խոչընդոտվել են դիտորդ Խաչատուր Սիրադեղյանի և Էլմիրա Մարտիրոսյանի աշխատանքները, թիվ 17/3 և 17/2 ընտրատեղամասերի հանձնաժողովի նախագահի կողմից մեկուսացվել են դիտորդները: Թիվ 8/22 ընտրատեղամասում «Ժառանգության» հանձնաժողովի անդամ Արմենուհի Համբարձումյանին նախ փորձել են կաշառել, ապա սպառնացել են: Վերջինս ահաբեկված լինելու հետևանքով չի համարձակվել արձանագրել լցոնման և այլ ընտրախախտումների փաստերը: Նյութերի նախապատրաստման ընթացքում բացատրություններ են վերցվել թիվ 8/22 տեղամասի հանձնաժողովի նախագահ Իռա Մարգարյանից և հանձնաժողովի անդամ «Ժառանգություն» կուսակցությունը ներկայացնող Արմենուհի Համբարձումյանից, ովքեր հայտնել են, որ տեղամասում ընտրություններն ընթացել են առանց որևէ խախտման և միջադեպերի, ընտրակեղծիքներ, լցոնումներ չեն եղել: Իրեն ոչ ոք չի մոտեցել կաշառք չի առաջարկել, ոչ ոք չի ահաբեկել, իր նկատմամբ բռնություն չի գործադրվել և սպառնալիքներ չեն եղել: Նշված դեպքերով Ոստիկանության կողմից որոշում է կայացվել քրեական գործի հարուցումը մերժել՝ հանցադեպի բացակայության հիմքով:

Փետրվարի 18-ին Ավան և Նոր-Նորքի վարչական շրջանների դատախազությունից նյութեր նախապատրաստելու համար ոստիկանության բաժին է ստացվել գրությունն առ այն, որ ժամը 08:45-ին թիվ 1/6 ընտրական տեղամասում «Քաղաքացիական հասարակության ինստիտուտ» ՀԿ-ի դիտորդն արձանագրել է, որ կնքված քվեատուփի տակի հատվածում ճեղք կա, որից հնարավոր է քվեաթերթիկ մտցնել: Նշված է եղել նաև, որ նույն տեղամասի Բ.Հովհաննիսյանի վստահված անձը դիտորդին հայտնել է, որ հանձնաժողովն իրեն աշխատելու հնարավորություն չի տալիս, մասնակից չի դարձնում ընտրական գործընթացին և որևէ տեղեկություն չի տրամադրում: Ոստիկանությունը բացատրություններ է վերցրել ընտրական տեղամասի հանձնաժողովի նախագահ Նազիկ Հայրապետյանից, որը հերքել է նշված տեղեկությունները: Միաժամանակ, ՀՀ Նախագահի թեկնածու Բաֆֆի Հովհաննիսյանի թիվ 1/06 ընտրական տեղամասի վստահված անձ Բաբկեն Սարգսյանը բացատրություն է տվել, որ ինքը քվեատուփի տակ նկատելով 4 հատ անցք և չիմանալով, որ դրանք գործարանային արտադրության անցքեր են, թյուրիմացաբար հայտնել է դիտորդին, իսկ դիտորդին ընտրական գործընթացին իրեն մասնակից չդարձնելու և որևէ տեղեկություն չտրամադրելու մասին չի հայտնել: Նախապատրաստված նյութերի արդյունքում որոշում է կայացվել քրեական գործի հարուցումը մերժելու մասին՝ հանցադեպի բացակայության պատճառաբանությամբ:

Փետրվարի 18-ին ժ. 19:00-ին Գյումրի քաղաքի թիվ 34/36 ընտրատեղամասի հանձնաժողովի նախագահ Մ.Սարգսյանը հայտնել է ոստիկանություն, որ նույն օրը, ժամը 17:35-ին հիշյալ տեղամաս է ներխուժել ԱԺ պատգամավոր «Ժառանգություն» խմբակցության ներկայացուցիչ Ռուբեն Հակոբյանը և հանձնաժողովի անդամների հասցեին վիրավորական արտահայտություններ կատարելով մոտ 30 րոպե տևողությամբ խոչընդոտել է ընտրական հանձնաժողովի աշխատանքների իրականացմանը: Նախաքննության ընթացքում հարցաքննվել են թիվ 34/36 տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամները, պահանջվել և ուսումնասիրվել են տվյալ տեղամասի գրանցամատյանի գրառումները, որոնք պարունակել են ընտրությունների օրը տվյալ ընտրական տեղամասում ներկա անձանց, այդ թվում՝ թեկնածուների վստահված անձանց,

դիտորդների և ԶԼՄ ներկայացուցիչների մասին: ՀՀ ԱԺ պատգամավոր Ռուբիկ Հակոբյանը հրաժարվել է ներկայանալ քննության, պատճառաբանելով, թե, ինքն իր հերթին, բողոք է ներկայացրել ոստիկանություն՝ Սուքիաս Ավետիսյանի անօրինական գործողությունների վերաբերյալ: Կատարված ստուգմամբ պարզվել է, որ նշված տեղեկատվությունը ճիշտ չէ, որից հետո Ռուբիկ Հակոբյանը պատճառաբանել է, որ չի կարող ներկայանալ քննության՝ ՀՀ ԱԺ նիստերին մասնակցելու պատճառով: Սույն դեպքի առթիվ ՀՀ հատուկ քննչական ծառայությունում փետրվարի 20-ին ՀՀ քրեական օրենսգրքի 149-րդ հոդվածի 1-ին մասի հատկանիշներով հարուցված թիվ 62201013 քրեական գործը կարճվել է:

Ահագանգ էր ստացվել նաև այն մասին, որ «Բարգավաճ Հայաստան» խմբակցության պատգամավոր Կարո Կարապետյանը տևական ժամանակ գտնվել է Արտաշատ քաղաքի թիվ 17/10 ընտրատեղամասում և խոչընդոտել է ընտրությունների ընթացքին: Ընտրատեղամասային ընտրական հանձնաժողովի քարտուղարի վկայությամբ՝ պատգամավորը վստահված անձ չէր և գրանցված չէր գրանցամատյանում: Մակայն 2013 թվականի մարտի 5-ին ոստիկանության Արտաշատի բաժնի կողմից ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով որոշում է կայացվել քրեական գործի հարուցումը մերժելու մասին՝ հանցադեպի բացակայության պատճառաբանությամբ:

2013թ. փետրվարի 18-ին կայացած ՀՀ Նախագահի ընտրությունների ընթացքում, ժամը 16-ի սահմաններում, դեռևս ինքնությունը չպարզված անձինք, մուտք գործելով Արտաշատ քաղաքում տեղակայված 17/05 ընտրատեղամաս, ձեռքերը բռնելու և այդ կերպ տեսանկարահանում կատարելու հնարավորությունից զրկելու եղանակով խոչընդոտել են ընտրությանը մասնակցող զանգվածային լրատվության միջոցի ներկայացուցիչ, «Լրագրողներ հանուն մարդու իրավունքների» հասարակական կազմակերպության լրագրող Արտակ Համբարձումյանի, ապա՝ նաև դիտորդ Նարինե Իսմաելի լիազորությունների իրականացմանը, որից հետո, քվեարկելով այլ անձանց փոխարեն, քվեատուփ քվեաթերթիկներ են լցնել: Նկատի ունենալով, որ առկա են եղել քրեական գործ հարուցելու առիթ և հիմք՝ 2013թ. փետրվարի 22-ին ՀՀ հատուկ քննչական ծառայությունում ՀՀ քրեական օրենսգրքի 149-րդ հոդվածի 2-րդ մասի 5-րդ կետի և 153-րդ հոդվածի հատկանիշներով հարուցվել է թիվ 62201213 քրեական գործը, և նախաքննությունը շարունակվում է:

Քվեարկության օրը տեղեկություններ են ստացվել նաև ընտրացուցակի անճշտության, ընտրատեղամասում վիճաբանության, ընտրատեղամասից գողության, ընտրատեղամասի մոտ գույքի դիտավորյալ վնասման, և նման այլ խախտումների վերաբերյալ: Այսպես, օրինակ՝ ըստ Ոստիկանության Մալաթիայի բաժնի կողմից տրամադրված տեղեկատվության Մալաթիա-Մեքաստիա վարչական շրջանների դատախազությունից ոստիկանության բաժին է ստացվել գրություն Մալաթիա-Մեքաստիա համայնքի թիվ 7/08 ընտրատեղամասում տեղի ունեցած վիճաբանության վերաբերյալ, երբ Ա.Գեղամյանը նկատել էր, որ ըստ ցուցակների իր բնակարանում գրանցված էր 7 մարդ, որոնց ինքը չէր ճանաչում: Տեղեկության առնչությամբ Ոստիկանության բաժնում որոշում է կայացվել քրեական գործի հարուցումը մերժելու մասին՝ հանցադեպի բացակայության հիմքով: Մակայն իրավապահ մարմինները բավարար միջոցներ չեն ձեռնարկել այդ տեղամասում կամ տարածքում ընդդիմադիր ուժերի ներկայացուցիչներից տեղեկություններ ստանալու համար: Ուստի չեն ներգրավվել գործի ելքով չշահագրգռված բոլոր պատշաճ անձինք:

Հարկ ենք համարում նշել, որ ի տարբերություն 2008թ. նախագահական ընտրությունների քվեարկության օրը արձանագրված ընտրախախտումների (որոնք հիմնականում վերաբերել են քաղաքացիներին թիվ 9 ձևի տեղեկանքներ բաժանելուն և միկրոավտոբուսներով տեղամասային կենտրոններ տեղափոխելուն, ընտրություններում ներգրավված անձանց նկատմամբ բռնության մի շարք դեպքերին, ինչպես նաև նրանց նկատմամբ ճնշումներ գործադրելուն, լցոնման բազմաթիվ դեպքերին) 2013թ. նախագահական ընտրությունների ընթացքում տեղի ունեցած էական ընտրախախտումները նվազել են:

Բացի այդ, 2008թ. նախագահական ընտրությունների վերաբերյալ ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ի միջանկյալ զեկույցում դիտարկված ընտրատեղամասերի մոտ 16 տոկոսում քվեարկության արդյունքների ամփոփումը գնահատվել է որպես «վատ» կամ «շատ վատ»: ԵԱՀԿ միջազգային դիտորդական առաքելությունը փաստել է, որ, ըստ ԿԸՀ-ի, թվով 25 ԸԸՀ-ներում ստացվել են 159 ընտրական տեղամասերի արդյունքների վերահաշվարկի վերաբերյալ դիմումներ, որոնցից բավարարվել է 134-ը: 2013թ. նախագահական ընտրությունների ընթացքում դիտարկված ընտրական 106 տեղամասերում, բացառությամբ 9 տեղամասի, ձայների հաշվարկման գործընթացը դրական է գնահատվել ԸՄԴԱ-ի դիտորդների կողմից:

Պ.Հայրիկյանի դեմ կատարված մահափորձ

Հունվարի 31-ին նախագահի թեկնածու Պ.Հայրիկյանի դեմ կատարված մահափորձի դեպքի առթիվ որոշում է կայացվել քրեական գործ հարուցելու մասին և նախաքննությունը դեռ ընթացքի մեջ է: Մարդու իրավունքների պաշտպանը հույս էր հայտնել, որ պետական մարմինները պատշաճ հետաքննություն կիրականցեն հանցագործներին հնարավորինս շուտ բացահայտելու ուղղությամբ: Ողջունելի է, որ կարճ ժամանակահատվածում՝ փետրվարի 7-ին, նախաքննություն իրականացնող ԱԱԾ աշխատակիցների օպերատիվ-հետախուզական գործողությունների արդյունքում ձերբակալվեցին Պ.Հայրիկյանի դեմ մահափորձ կատարելու մեջ կասկածվող երկու անձինք: Քրեական գործով կատարված քննչական և դատավարական գործողությունների կատարման, ինչպես նաև ձեռնարկված օպերատիվ-հետախուզական միջոցառումների արդյունքում, 05.03.2013թ. ՀՀ քրեական օրենսգրքի 34 և 305-րդ հոդվածով մեղադրանք է առաջադրվել Նախագահի նախկին թեկնածու Վարդան Սեդրակյանին, և դատարանի կողմից որպես խափանման միջոց է կիրառվել կալանավորումը:

273 չհարուցված քրեական գործ

Բոլոր ընտրախախտումների վերաբերյալ մեր կողմից կատարված հարցումների և ստացված պատասխանների ուսումնասիրությունից և ամփոփումից պարզ է դառնում, որ ՀՀ Ոստիկանությունը և Գլխավոր դատախազությունը 2013 թվականի նախագահական ընտրությունների վերաբերյալ հետաքննել են 293 հնարավոր քրեական և վարչական իրավախախտումներ: Դրանց մեծ մասը հարուցվել է լրատվամիջոցներում հրապարակված տեղեկատվության հիման վրա, այդ թվում առցանց և սոցիալական ցանցերում, մինչդեռ թեկնածուների քարոզչական շտաբերը քիչ թվով բողոքներ են ներկայացրել: Բողոքների մեծ մասը վերաբերվել է ընտրակաշառքի, ՀՀԿ-ի ներկայացուցիչների կողմից ընտրողներին ահաբեկելու, ինչպես նաև բազմակի և ուրիշի փոխարեն քվեարկելու դեպքերին: Նշված դեպքերից 273-ով Ոստիկանության և ՀՔԾ-ի կողմից որոշում է կայացվել քրեական գործի հարուցումը մերժելու մասին՝ հանցադեպի բացակայության պատճառաբանությամբ: 20 դեպքում որոշում է կայացվել քրեական գործ հարուցելու

մասին: Հետագայում 13 հարուցված քրեական գործերի վարույթը կարճելու մասին որոշում է կայացվել: Արդյունքում միայն 4 գործեր մեղադրական եզրակացությամբ ուղարկվել են համապատասխան դատարաններ, իսկ 3-ի վերաբերյալ դեռևս ընթանում է նախաքննություն: Ողջունելի է, որ նկատվել է պետական մարմիններին հասցեագրվող բողոքների աճ, ինչը վկայում է այդ մարմինների նկատմամբ հանրության վստահության բարձրացման մասին: Սակայն 293 դեպքից 273-ով քրեական գործի հարուցումը մերժելու մասին որոշում կայացնելը մտահոգիչ է այնքանով, որ չեն իրականացվել քրեական դատավարության օրենսգրքով նախատեսված անհրաժեշտ բոլոր քննչական գործողությունները, քանի որ նախքան քրեական գործ հարուցելու մասին որոշում կայացնելը հնարավոր է իրականացնել սահմանափակ գործողություններ: Այնինչ, քրեական դատավարության օրենսգրքը նախատեսում է, որ քրեական հետապնդում իրականացնող մարմինը պարտավոր է ձեռնարկել սույն օրենսգրքով նախատեսված բոլոր միջոցառումները՝ գործի հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման համար: Ավելին, քրեական գործի հարուցումը մերժելու մասին որոշումը հիմնականում կայացվել է անձանցից վերցված բացատրությունների հիման վրա, որը ինքնին չի հանդիսանում ապացույց՝ համաձայն քրեական դատավարության օրենսգրքով նախատեսված թույլատրելի ապացույցների ցանկի: Այն կարող է ճանաչվել գործի ընթացքում որպես այլ փաստաթուղթ և դրանով միայն ընդունվել որպես ապացույց, և պատահական չէ, որ օրենսդիրը թույլատրելի ապացույցների տեսակներում հստակ նախատեսել է կասկածյալի, մեղադրյալի, տուժողի, վկայի ցուցմունքները: Սակայն այդ ապացույցները կարող են ձեռք բերվել միայն քրեական գործի հարուցման պարագայում: Ուստի, այն դեպքերում, երբ նյութերի նախապատրաստման փուլում հնարավոր չէ պարզել գործի հանգամանքները, քրեական հետապնդում իրականացնող մարմինը՝ գործի հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման համար, պարտավոր է առկա նյութերով քրեական գործ հարուցելու մասին որոշում կայացնել, որի շրջանակներում օրենսդիրը քննչական գործողություններ իրականացնելու համար որևէ սահմանափակում չի նախատեսում, այլ ոչ թե եղած նյութերով քրեական գործի հարուցումը մերժելու մասին որոշում կայացնել:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ

Չնայած 2013 թվականի նախագահական ընտրությունների քվեարկության պատշաճ կազմակերպվածությանը, այնուամենայնիվ, գրանցվել են ընտրության բնականոն անցկացմանը խոչընդոտող մի շարք դեպքեր, մասնավորապես՝ քվեարկության գաղտնիության խախտում, ընտրական գործընթացին անօրինական միջամտում, լարվածության մթնոլորտ, դրոշմակնքման հետ կապված բողոքներ, ինչպես նաև մի շարք այլ խնդիրներ և դեպքեր: Ընտրական օրենսգրքը հստակորեն սահմանում է քվեարկության սենյակում միաժամանակ 15-ից ավելի քվեարկողներ գտնվելու, քվեարկության օրը տեղամասային կենտրոնին հարող տարածքում մինչև 50 մետր շառավղով խմբերով հավաքվելու, ինչպես նաև տեղամասային կենտրոնի մուտքին հարող տարածքում մեքենաների կուտակումների արգելքը: Սակայն գրանցվել են մարդկային Ընտրական օրենսգրքով սահմանված թվաքանակը գերազանցող կուտակումներ:

Այլ խնդիրները վերաբերել են Ընտրական օրենսգրքով սահմանված կարգի խախտմամբ պաստառների փակցմանը և պաշտոնատար անձանց կողմից իրենց պարտականություններն իրականացնելիս թեկնածուների օգտին քարոզ իրականացնելուն:

Քվեարկության գաղտնիության և դրոշմակնքման հետ կապված խնդիրներ

Միջազգային կազմակերպությունների դիտորդական առաքելությունների իրականացման ընթացքում վերջիններս փաստել են, որ դիտարկված ընտրատեղամասերի 6 տոկոսում ոչ բոլոր ընտրողներն են գաղտնի նշում կատարել իրենց քվեաթերթիկների վրա, և դիտարկված 12 տոկոսում՝ նախքան ընտրախցից դուրս գալը դրանք ծրարի մեջ դրել, իսկ 6 տոկոսում արձանագրվել էին խմբակային քվեարկության դեպքեր :

Այսպես, Գետահովիտ գյուղում՝ թիվ 40/33 ընտրատեղամասում դիտորդն արձանագրել է բաց քվեարկության դեպք: Նյութերի նախապատրաստման ընթացքում թիվ 40/33 ընտրատեղամասի գննությամբ և թիվ 40/33 ընտրատեղամասի հանձնաժողովի նախագահ Նաիրա Ասլանյանից, ՀՀ Նախագահի Սերժ Սարգսյանի վստահված անձ Սաշա Ադամյանից և Տավուշի մարզի Գետահովիտ գյուղի բնակիչ Դորիկ Այդինյանից վերցված բացատրություններով պարզվել է, որ որևէ խախտում չի կատարվել, քվեարկությունը կատարվել է օրենքով սահմանված գաղտնի կարգով, որևէ մեկը չի խոչընդոտել: Մամուլում տեղ գտած հրապարակումներից պարզ է դարձել, որ Տավուշի մարզի Գետահովիտ գյուղում գտնվող թիվ 40/33 ընտրատեղամասում դիտորդն արձանագրել է բաց քվեարկության դեպք՝ տեղեկությունը դասվում է ոչ վստահելիի շարքին:

Ոստիկանության Տավուշի բաժնի կողմից տրամադրված տեղեկատվության համաձայն փետրվարի 18-ին ինտերնետային կայքէջերից մեկը հաղորդագրություն է տարածել, որ Չինարի գյուղում խախտվում է ընտրության գաղտնիությունը, անհայտ անձը վերահսկում է քվեաթերթիկում Ս.Սարգսյանի անվան դիմաց նշում կատարելը: Նյութերի նախապատրաստման ընթացքում ՀՀ Նախագահի նախկին թեկնածու Բաֆֆի Հովհաննիսյանի թիվ 41/40 տեղամասում վստահված անձ Արարատ Պետրոսյանը, «Դիլնետ» դիտորդական կազմակերպության ներկայացուցիչ, դիտորդ Սիփան Մաղոյանը, ընտրական հանձնաժողովի նախագահ Տիգրան Օրոյանը և քարտուղար Հասմիկ Ծաղկյանը բացատրություններ են տվել, որ ընտրական տեղամասը բացվելու պահից ընտրությունները ընթացել են նորմալ, հանգիստ պայմաններում, պահպանվել են ընտրողների իրավունքները և ընտրության գաղտնիությունը և որևէ թեկնածուի օգտին քվեարկելու ուղղորդում որևէ անձի կողմից թե տեղամասից դուրս, և թե տեղամասի ներսում չի արձանագրվել:

Թիվ 6/02 ընտրական տեղամասի հանձնաժողովի նախագահ Վ. Խաչատրյանը հաղորդում է տվել այն մասին, որ նույն օրը, ժամը 13:00-ին թիվ 6/02 ընտրական տեղամասում քվեարկության ընթացքում ընտրողներից Մ.Նազարյանը՝ խախտելով քվեարկության գաղտնիությունը, քվեարկելուց և քվեարկության խցիկից դուրս գալուց հետո քվեաթերթիկը ցույց է տվել դստերը՝ Ն.Նազարյանին: Նյութերի նախապատրաստման ընթացքում բացատրություններ են վերցվել Նունե և Մարիետա Նազարյաններից, ովքեր նույնաբովանդակ բացատրություններ են տվել, այն է՝ Մարիետա Նազարյանը միտումնավոր չէ, որ ցույց է տվել իր քվեաթերթիկը, այլ նա տարեց կին է՝ 1939 թ. ծնված և իր դստերից միայն հարցրել է, թե ճիշտ ձևով է նշումը կատարել, թե՛ ոչ: Նախապատրաստված նյութերով պարզվել և հիմնավորվել է, որ Նունե Նազարյանի և Մարիետա Նազարյանի կողմից չի խախտվել քվեարկության գաղտնիությունը, Նունե Նազարյանին ոչ ոք չի հորդորել կամ ստիպել որևէ թեկնածուի օգտին քվեարկելու, ոչ ոք որևէ եղանակով չի ստուգել քվեաթերթիկը կամ մուտք գործել քվեախցիկ:

Որոշ դեպքերում ընտրողները քվեաթերթիկը քվեախցիկում ծրարում չեն տեղադրել, այլ քվեատուփի մեջ զցելուց առաջ ցույց են տվել դրա մոտ կանգնած մարդկանց: Նյութերի

նախապատրաստման ընթացքում բացատրություն է վերցվել Անահիտ Գևորգյանից, որը նշել է, որ Մարտունի քաղաքի 24/05 ընտրատեղամասում 2 կին քվեարկած քվեաթերթիկը ծրարի մեջ դրել են քվեախցից դուրս, տեղեկությունը տալու ժամանակ ինքը գտնվել է Վարդենիկ գյուղում, որի մասին լրագրողին ասել է, սակայն հոդվածը սխալ է մեկնաբանվել, որի վերաբերյալ ինքը կայքէջում հերքում է տվել, քանի որ Վարդենիկ գյուղում ընտրախախտումներ չեն եղել, իսկ Մարտունի քաղաքում միայն վերոնշված ընտրատեղամասում նշված խախտումն է հայտնաբերվել: Նախապատրաստված նյութերով հաղորդման մեջ նշված հանգամանքները չեն հիմնավորվել:

Քվեարկության գաղտնիության խախտման վերաբերյալ ՀՀ Ոստիկանության կողմից քննարկվել են 10 դեպքեր: Վերոնշյալ և նմանատիպ մի շարք այլ դեպքերի կապակցությամբ Ոստիկանության կողմից որոշում է կայացվել քրեական գործերի հարուցումը մերժելու մասին՝ հանցադեպի բացակայության պատճառաբանությամբ:

ՀՀ ընտրական օրենսգրքի համաձայն՝ անձը հաստատող փաստաթղթի դրոշմակնքման համար տեղամասային ընտրական հանձնաժողովներին հասկացվում է այնպիսի նյութ, որն օգտագործելուց հետո առնվազն 12 ժամ պահպանվում է, իսկ հետո՝ անհետանում: Միջազգային փորձի ուսումնասիրությունից կարելի է եզրակացնել, որ ընտրախախտումների կանխարգելման արդյունավետ մեխանիզմ է հանդիսանում ընտրողների ստուգման երկաստիճան համակարգը, այսինքն՝ ոչ միայն ընտրական ցուցակների կազմման, վարման, դրանց հրապարակայնության, ընտրական տեղամասում ընտրողների ցուցակում ընտրողի անձը հաստատող փաստաթղթի տվյալների գրանցման կանոնակարգումները, այլև դրանց դրոշմակնքումը կամ ընտրողի մատների թանաքոտումը (Եզիպտոս, Լատվիա, Հնդկաստան, Մեքսիկա, Պերու, և մի շարք այլ երկրներ): 2012 թ. ՀՀ խորհրդարանական ընտրությունների ընթացքում անձը հաստատող փաստաթղթի դրոշմակնքման գործընթացի հետ կապված խնդիրների վերաբերյալ ստացվել էին 64 ահազանգեր: Այդ ահազանգերը վերաբերել են թե՛ դրված դրոշմակնիքների՝ օրենքով սահմանված ժամկետից շուտ անհետացմանը, և թե՛ դրանց սահմանված 12 ժամից ավել մնալուն: 2013թ. ՀՀ նախագահական ընտրությունների ժամանակ նույնպես ստացվել են 68 ահազանգեր, որոնք վերաբերել են անձը հաստատող փաստաթղթի դրոշմակնքման գործընթացին: Կրկին անգամ ահազանգերը վերաբերել են դրոշմակնիքի կամ շուտ անհետանալուն կամ սահմանված 12 ժամից ավել մնալուն: Ահազանգերը վերաբերել են նաև նրան, որ դրված կնիքները անձանց ցանկության դեպքում հեշտությամբ հնարավոր էր ջնջել: Կնիքի հեշտությամբ ջնջվելը խիստ մտահոգիչ է այնքանով, որ այն չի համապատասխանում ընտրողների ստուգման երկաստիճան համակարգի նպատակին և ավելին, նպաստավոր պայմաններ է ստեղծում իրավախախտների կողմից ընտրակեղծիքներ կատարելու համար:

Պատահական չէ, որ միջազգային մի շարք կազմակերպություններ դրական էին գնահատել 2011 թ. ընդունված նոր ՀՀ ընտրական օրենսգրքի մեջ դրոշմակնքման վերաբերյալ դրույթի ներառումը, քանի որ այն պետք է հանդիսանար ընտրախախտումների կանխարգելման մեխանիզմ: Սակայն ԿՀՀ-ի կողմից առ այսօր հնարավոր չի եղել ստանալ այնպիսի մի նյութ, որը կհամապատասխաներ ՀՀ ընտրական օրենսգրքի պահանջներին և միջազգային չափանիշներին:

ՀՀ Ազգային ժողովի 2012 թ. մայիսի 6-ի ընտրությունների կազմակերպման և անցկացման, Ընտրական օրենսգրքի խախտումների, առաջարկվող օրենսդրական փոփոխությունների վերաբերյալ ՀՀ Կենտրոնական ընտրական հանձնաժողովի կողմից 01.08.2012թ. ներկայացված հաղորդագրությամբ առաջարկվել էր հանել Ընտրական

օրենսգրքի այն դրույթը, որը նախատեսում է ընտրողի անձը հաստատող փաստաթղթի դրոշմակնքում այնպիսի նյութով, որն օգտագործելուց հետո առնվազն 12 ժամ պահպանվում է, իսկ հետո՝ անհետանում: 2008թ. Վենետիկի հանձնաժողովը անդրադառնալով դրոշմակնքման հարցին՝ առաջարկել է օգտագործել մատների թանաքոտման ինստիտուտը՝ մտահոգիչ համարելով այն, որ անձնագրում դրվող դրոշմակնիքը կարող է չանհետանալ: 2011 թ. հոկտեմբերի 17-ի Իրավունքի միջոցով ժողովրդավարության Եվրոպական հանձնաժողովի (Վենետիկյան հանձնաժողով) և ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ի ՀՀ ընտրական օրենսգրքի վերաբերյալ համատեղ եզրակացության մեջ նշվել է, որ դրոշմակնիքի թանաքը պետք է անհետանա մոտավորապես 12 ժամ հետո, ինչը կարող է լուծել անձը հաստատող փաստաթղթերում կնիքի առկայության պատճառով քաղաքացիների հնարավոր ահաբեկման (հետապնդման, ճնշումների) խնդիրները: Միննույն ժամանակ նշենք, որ 2012թ. ԵՄԽՎ-ն հայտնել է իր կարծիքը Հայաստանում ընտրությունների ժամանակ քվեարկության ընթացքում ընտրախախտումների դեմ պայքարի որպես մեխանիզմ ընտրված անձը հաստատող փաստաթղթերում դրվող դրոշմակնիքի ինստիտուտի վերաբերյալ՝ նշելով, որ նման խնդրի լուծման համար առավել դասական և փորձված միջոց է ընտրողների մատների թանաքոտումը: Այսինքն, միջազգային փորձից կարելի է եզրակացնել, որ վերոնշյալ խնդրի արդյունավետ լուծում չի կարող հանդիսանալ ընտրողների ստուգման երկաստիճան համակարգի վերացումը:

Վերոնշյալ խնդրի վերաբերյալ Մարդու իրավունքների պաշտպանի կողմից առաջարկություն էր ուղարկվել ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովի նախագահին, որպեսզի վերջիններս պարզեն, թե հնարավոր է դրոշմակնքման համար այնպիսի նյութի ձեռքբերումը, որը կհամապատասխանի ՀՀ ընտրական օրենսգրքի պահանջներին և միջազգային չափանիշներին:

Ընտրական իրավունքի մատչելիություն

Քվեարկության մատչելիությունից դժգոհելով Պաշտպանին ահազանգել է հաշմանդամություն ունեցող 9 անձ: Չնայած ձեռնարկված միջոցառումներին՝ դեռևս կան ընտրատեղամասեր, որտեղ տեղադրված չեն թեքահարթակներ կամ այլ սարքավորումներ, որոնց միջոցով հնարավոր կլինի ապահովել վերոնշյալ անձանց ընտրական իրավունքի իրականացումը: Միաժամանակ, հարկավոր է փոփոխություններ կատարել Ընտրական օրենսգրքում՝ հստակ սահմանելով հաշմանդամություն ունեցող անձանց և բժշկական հաստատություններում չգտնվող, սակայն միննույն ժամանակ հիվանդության պատճառով ընտրատեղամաս գնալու հնարավորություն չունեցող անձանց համար ընտրություններին մասնակցելու արդյունավետ մեխանիզմներ:

ՀՀ Սահմանադրության 30-րդ հոդվածի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության տասնութ տարին լրացած քաղաքացիներն ունեն ընտրելու և հանրաքվեներին մասնակցելու, ինչպես նաև անմիջականորեն և կամքի ազատ արտահայտությամբ ընտրված իրենց ներկայացուցիչների միջոցով պետական կառավարմանը և տեղական ինքնակառավարմանը մասնակցելու իրավունք: Իսկ ՀՀ Սահմանադրության 48-րդ հոդվածի 7-րդ կետը սահմանում է պետության պարտավորությունը խթանելու հաշմանդամների մասնակցությունը հասարակական կյանքին, որն իր մեջ ներառում է նաև նրանց՝ մյուսների հետ հավասար հիմունքներով ընտրություններին մասնակցելու իրավունքը: Ավելին, «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» ՄԱԿ-ի կոնվենցիայի դրույթներին համաձայն՝ պետությունը պարտավորվում է ապահովել, որ քվեարկության ընթացակարգերը, վայրերը և միջոցները լինեն մատչելի

հաշմանդամություն ունեցող անձանց համար: Սույն թվականի փետրվարի 18-ին տեղի ունեցած Հայաստանի Հանրապետության նախագահական ընտրությունների ընթացքում մի շարք ահազանգերով ստացված տեղեկությունների, ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի, ինչպես նաև տարբեր հասարակական կազմակերպությունների կողմից անցկացված մշտադիտարկումների արդյունքները վկայում են այն մասին, որ հանրապետության ընտրական տեղամասերի մեծամասնությունը մատչելի չէ հաշմանդամություն ունեցող անձանց մուտք ու ելքի համար: Այսինքն, հաշմանդամություն ունեցող անձինք փաստացի զրկվում են իրենց ընտրելու իրավունքից: Տվյալ հարցը պահանջում է առավել հրատապ լուծում՝ հաշվի առնելով սույն թվականի մայիսին կայանալիք Երևանի ավագանու ընտրությունները:

ՀՀ մարդու իրավունքների պաշտպանը հաշվի առնելով հարցի կարևորությունը՝ սույն թվականի փետրվարի 28-ին դիմել էր ՀՀ փոխվարչապետ, ՀՀ տարածքային կառավարման նախարար Արմեն Գևորգյանին հաշմանդամություն ունեցող անձանց ընտրական իրավունքի իրականացման մատչելիության ապահովման նպատակով: Պաշտպանի գրությանն ի պատասխան՝ փոխվարչապետն առաջարկություն էր ներկայացրել ՀՀ մարզպետներին և Երևանի քաղաքապետին՝ ձեռնարկելու անհրաժեշտ միջոցներ հաշմանդամություն ունեցող անձանց օրենքով նախատեսված իրավունքների ապահովման համար:

ՀԵՏԸՆՏՐԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄՆԵՐ

Այս բաժնում կներկայացվեն 2013թ. նախագահական ընտրություններին հաջորդած հետընտրական զարգացումները: Այսպես, 2013թ. նախագահական ընտրություններին հաջորդած հետընտրական զարգացումները սկիզբ առան փետրվարի 18-ի նախագահական ընտրությունների քվեարկության օրվան հաջորդող ԿԸՀ-ի ընտրությունների նախնական արդյունքների հրապարակմամբ, համաձայն որոնց գործող նախագահ Սերժ Սարգսյանը վերընտրվել է առաջին փուլում: Այդ արդյունքների հետ համաձայն չէր երկրորդ տեղ զբաղեցրած նախագահի նախկին թեկնածու Բաբայանի Հովհաննիսյանը: Փետրվարի 20-ից սկսած՝ ընդդիմադիր ուժերի ներկայացուցիչները իրենց պաշտոնական դիրքորոշումները հայտնելիս ներկայացրել են այն պնդումը, համաձայն որի փետրվարի 18-ին կայացած ընտրությունների նախնական արդյունքները չեն համապատասխանել իրականությանը: Հասարակության որոշ զանգված ակտիվորեն մասնակից էր դարձել այդ հանրահավաքներին: Ընդդիմության ներկայացուցիչները, իրենց հերթին, սուր քննադատության են ենթարկել ընտրական գործընթացի գրեթե բոլոր փուլերը և հատկապես քվեարկության արդյունքների ամփոփումը: Հանրահավաքներին իրենց մասնակցությունն են ցուցաբերել նաև ՀՀ Ազգային ժողովի որոշ խմբակցությունների ներկայացուցիչները, մասնավորապես՝ ՀԱԿ և ՀՅԴ խմբակցություններից: 2008թ. նախագահական ընտրությունների հետընտրական զարգացումների ընթացքում նման հայտարարություններ և զարգացումներ նույնպես եղել են /Մարդու իրավունքների պաշտպանի 2008 թվականի արտահերթ զեկույց/:

Այսպես, փետրվարի 25-ին ԿԸՀ-ն ամփոփել և հրապարակել է նախագահական ընտրությունների վերջնական արդյունքները: Համաձայն հայտնած պաշտոնական տեղեկատվության՝ ՀՀ-ում ընտրելու իրավունք ունեցող քաղաքացիների թիվը 2.529.016 է, սակայն ընտրությանը մասնակցել է 1.521.931 ընտրող, այսինքն՝ ընտրողների 60.18%-ը: Հայաստանի նախագահի ընտրությունները կազմակերպելու նպատակով կազմավորվել էր 1988 ընտրական տեղամաս: Վերջնական արդյունքների համաձայն՝ քվեարկությանը

մասնակցել են 1.521.489 ընտրող (60,18%): Ընտրելու իրավունք ունեցող քաղաքացիները 2.509.434 հոգի են եղել: ԿԸՀ-ի վերջնական տվյալները հետևյալն են. Բաֆֆի Հովհաննիսյան՝ 539693 ձայն (36,74%); Վարդան Սեդրակյան՝ 6210 ձայն (0,42%); Հրանտ Բագրատյան՝ 31 643 ձայն (2,15%); Սերժ Սարգսյան՝ 861 373 ձայն (58,64%); Պարույր Հայրիկյան՝ 18 096 ձայն (1,23%); Անդրիաս Ղուկասյան՝ 8329 ձայն (0,57%); Արման Մելիքյան՝ 3520 ձայն (0,24%): Միաժամանակ ԿԸՀ-ն հայտնել է, որ ընտրությունների ընթացքում ԿԸՀ-ն ստացել է 16 դիմում-բողոք և երկու հաղորդում, որոնք քննարկվել են, ինչի արդյունքում կայացվել են համապատասխան որոշումներ ու տրվել գրավոր պատասխաններ: Ըստ ԿԸՀ-ի՝ 2013թ.-ի նախագահական ընտրությունների ընթացքում ընտրախախտումներ, որոնք կարող էին ազդել ընտրությունների արդյունքի վրա տեղի չեն ունեցել: Հիմք ընդունելով Հայաստանի ընտրությունների արդյունքների վերաբերյալ արձանագրությունները՝ ԿԸՀ-ն 25.02.2013թ. թիվ 62-Ա որոշմամբ սահմանել է, որ ՀՀ նախագահ է վերընտրվել Սերժ Սարգսյանը:

ՀՀ նախագահական ընտրությունների վերաբերյալ զեկույցը ներկայացնելիս ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ դիտորդական պատվիրակության ղեկավար Հեյդի Տալիավիսի հայտարարության համաձայն նկատվել են պատշաճ չկնքված քվեատուփեր, խմբակային և/կամ կրկնակի քվեարկության դեպքեր: Ըստ ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ի դիտորդի՝ չնայած ադմինիստրատիվ ռեսուրսի չարաշահման առկայությանը, երբ, մասնավորապես, որոշ հանրային պաշտոնյաներ օգտագործել են իրենց պաշտոնական դիրքը, ընտրություններն «ընդհանուր առմամբ լավ էին կազմակերպված»:

Բացի այդ, ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ ԸԴԱ-ի կողմից անց է կացվել ուղիղ համեմատական մասնակցության շատ բարձր ցուցանիշ ունեցող ընտրատեղամասերի և գործող նախագահին կողմ քվեարկած ձայների միջև, որի համաձայն այն ՏԸՀ-ներում, որտեղ ընտրողների մասնակցության տոկոսը միջինից բարձր է եղել պարոն Սարգսյանը ստացել է ձայների ավելի մեծ բաժին:

Միևնույն ժամանակ նախագահական ընտրությունների ժամանակ ԵԱՀԿ դիտորդական առաքելության անդամ, Իռլանդիայի ԱԳ նախկին նախարար Դերմոտ Ահերնը 2013 թվականի մարտի 5-ին Հայ իրավաբանների միության ատենապետ Գարո Ղազարյանին ուղղված նամակում անդրադարձել է իր կողմից նկատած կոպիտ ընտրախախտումներին: Նամակում, մասնավորապես, նշվել է, որ ընտրության օրը իրենք դիտարկել են վեց ընտրատեղամաս, որոնցից Եղվարդի թիվ 26 ԸՀ անդամները դրսևորել են որոշակի անհանգստություն դիտորդների ներկայությունից ու չեն իրականացրել պատշաճ համագործակցություն: Ըստ դիտորդական առաքելության անդամի հայտնած տեղեկությունների 26/1-ի ընտրական տեղամասի արդյունքների տրամադրման խնդրանքին չեն ընդառաջել, սակայն վերջինիս թարգմանչին հաջողվել է տեսնել արձանագրությունը, որտեղ, համաձայն նրա խոսքերի, գործող նախագահը հաղթել է Բաֆֆի Հովհաննիսյանին մոտավորապես 382/302 հարաբերակցությամբ, չնայած նրան, որ ըստ վերջինիս հայտնած տեղեկությունների Բաֆֆի Հովհաննիսյանը հաղթում էր այդ տեղամասում դիտորդական ստուգումների ժամանակ: Այդ արդյունքները կասկածելի են համարվել Իռլանդիայի ԱԳ նախկին նախարարի կողմից:

Եվրամիության արտաքին գործերի և անվտանգության քաղաքականության բարձր ներկայացուցիչ Քեթրին Էշթոնը և Ընդլայնման ու Եվրոպական հարևանության քաղաքականության հանձնակատար Շտեֆան Ֆյուլեն՝ Հայաստանի նախագահի ընտրությունների վերաբերյալ տարածած հայտարարությամբ հայտնել են, որ, հիմք ընդունելով փետրվարի 18-ին նախագահի ընտրությունների նախնական արդյունքները, կիսում են միջազգային դիտորդական առաքելությունների նախնական գնահատականներն

ու եզրակացությունները: Վերոնշյալ պաշտոնատար անձանց կողմից միաժամանակ նշվել է որոշ մտահոգությունների առկայության և միջոցներ ձեռնարկելու անհրաժեշտության մասին՝ ընտրողների վրա ճնշումների, ադմինիստրատիվ ռեսուրսների օգտագործման, քարոզարշավի ֆինանսավորման հստակության բացակայության դեպքերը բացատրելու նպատակով:

Եվրոպայի խորհրդի երևանյան գրասենյակի տարածած հաղորդագրության համաձայն՝ Հայաստանի նախագահական ընտրություններն, ընդհանուր առմամբ, լավ էին կազմակերպված և առկա էր հարգանք հիմնարար ազատությունների, ներառյալ հանրահավաքների և խոսքի ազատության նկատմամբ: Այդուհանդերձ, միջազգային դիտորդական առաքելությունն իր հայտարարության մեջ ընդգծել է պետության և իշխող կուսակցության գործողությունների ոչ հստակ տարանջատման առկայությունը, ինչը պայմանավորված է եղել հանրային կառավարման անկողմնակալության բացակայությամբ, ինչպես նաև վարչական ռեսուրսի չարաշահմամբ: Համաձայն այդ հայտարարության՝ լրատվամիջոցները իրականացրել են իրենց՝ հավասարաչափ լուսաբանում տրամադրելու իրավական պարտավորությունը և բոլոր մրցակիցները օգտվել են իրենց հատկացված անվճար եթերաժամից: Բայցևայնպես, անհրաժեշտ է հավելել, որ հայտարարությունում արդեն իսկ նշված են վարչական ռեսուրսների չարաշահման վերաբերյալ մտահոգություններ:

Ընտրությունների միջազգային դիտորդական առաքելությունը (ԸՄԴԱ) իր Նախնական հայտարարության մեջ նշել է, որ ընտրությունների օրն անցել է հիմնականում հանգիստ և խաղաղ: Չնայած քվեարկության պատշաճ կազմակերպվածությանը՝ դիտարկված տեղամասերում ԸՄԴԱ-ի դիտորդները կազմակերպվածությունը բացասական են գնահատել ընտրական տեղամասերի 5 տոկոսում: Բացասական գնահատման հիմնական պատճառներն էին. ընտրական գործընթացին անհարիր միջամտումը, լարվածությունը կամ անհանգիստ վիճակը, տեղամասերի ներսում և դրսում մարդկանց մեծ կուտակումները, ինչպես նաև մի շարք լուրջ ընտրախախտումները քվեարկության ընթացքում:

Ընդդիմության ներկայացուցիչների դիրքորոշման համաձայն ԿԸՀ-ի հրապարակած պաշտոնական տվյալները չեն արտահայտել ընտրողների կամքը և, որ տեղի է ունեցել ընտրացուցակների և քվեաթերթիկների կեղծարարություն՝ տեղամասերի 10-20%-ում, ինչն էականորեն ազդել է ընտրությունների արդյունքների վրա և բավարար հիմք է՝ ընտրություններն անվավեր ճանաչելու պահանջ ներկայացնելու համար: Նախագահական ընտրություններում հավաքած ձայների թվով երկրորդ տեղը զբաղեցրած թեկնածու Բաֆֆի Հովհաննիսյանը հանրահավաքներ և հանդիպումներ է անցկացրել քաղաքացիների հետ թե Երևան քաղաքում և թե մարզերում ու գյուղերում և այդ հանրահավաքներին ու հանդիպումներին անձանց մասնակցությունը խոչընդոտելու դեպքեր չեն գրանցվել: Ի տարբերություն 2008 թ. Նախագահական ընտրություններին հետևած զարգացումներին որևէ պարագայում չեն սահմանափակվել անձանց ազատ տեղաշարժվելու և հավաքներին մասնակցելու իրավունքները:

ՀՀ Նախագահ Սերժ Սարգսյանը փետրվարի 21-ին հանդիպում է ունեցել նախագահի նախկին թեկնածու Բաֆֆի Հովհաննիսյանի հետ: Հանդիպումից հետո տեղի ունեցած զարգացումները, ըստ էության, չեն փոխել ընդդիմության ներկայացուցիչների դիրքորոշումը և գործողությունները: Շարունակական հանրահավաքները անցել են խաղաղ, և հանրահավաքների ընթացքում չեն գրանցվել խոչընդոտման դեպքեր ՀՀ Ոստիկանության աշխատակիցների կողմից, սակայն նրանց կողմից եղել են

հայտարարություններ, որ այդ հավաքները անօրինական են և կարող են հանգեցնել վարչական պատասխանատվության: Ի տարբերություն 2008 թ. նախագահական ընտրությունների հետընտրական զարգացումների՝ ոստիկանության կողմից որդեգրած գործելաճի արդյունքում էական անհամաձայնություններ հանրահավաքների կազմակերպիչների և մասնակիցների միջև չեն գրանցվել:

Վերոնշյալ որոշումից հետո, ընդդիմադիր ներկայացուցիչների հավաքներն Ազատության հրապարակում չեն դադարել: Հավաքները կրել են շարունակական բնույթ, որին իրենց մասնակցությունն են ցուցաբերել հանրության մի խումբ ներկայացուցիչներ: Այնուհետև, մարտի 10-ին նախկին նախագահի թեկնածու Բաբայանի Հովհաննիսյանը հայտարարել է հացադուլ: Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի արագ արձագանքման խմբի ներկայացուցիչները պարբերաբար այցելել են Ազատության հրապարակում հացադուլ հայտարարած նախագահի նախկին թեկնածուին:

2013թ. նախագահական ընտրություններին հաջորդած հետընտրական զարգացումների ողջ ընթացքում ընդդիմության ներկայացուցիչների և իրենց կողմից կազմակերպվող հանրահավաքների և այլ գործողությունների ներկայացման վերաբերյալ տեղեկատվական լուրջ բաց, ըստ էության, տեղի չի ունեցել: Դիտորդական առաքելություն իրականացնող որոշ կազմակերպությունների կողմից կատարած հետընտրական զարգացումների լուսաբանման վերաբերյալ ուսումնասիրությունների արդյունքում արձանագրվել են, որ հիմնական հեռարձակվող լրատվամիջոցները, այդ թվում Հանրային Հ1 հեռուստատվիքը, որոշ դեպքերում հետընտրական իրադարձությունների լուսաբանման ընթացքում սահմանափակել են ընտրությունների անցկացման վերաբերյալ քննադատական տեսակետները: Բոլոր այն լրատվամիջոցները, որոնք մշտադիտարկվել են ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ ԸԴԱ-ի կողմից, կանոնավոր կերպով լուսաբանել են Բաբայանի Հովհաննիսյանի կողմից կազմակերպված հանրահավաքները և բողոքի ցույցերը: Այնուամենայնիվ, Հ1-ը, Շանթը և Արմենիա հեռուստատեսությունները հաճախ ներկայացրել են հանրահավաքների միայն ընդհանուր և մակերեսային լուսաբանում, միաժամանակ բազմիցս նշելով, որ հանրահավաքները անօրինական են և հաղորդելով այս առումով արված ոստիկանության հայտարարությունը: Ուսումնասիրությունների համաձայն հեռուստատվիքների մեծ մասը (բացառությամբ Երկիր մեդիա և Կենտրոն հեռուստատեսության) հիմնականում մատնանշել են նախագահական ընտրությունների դրական կողմերը և, ընդհանուր առմամբ, խուսափել են ներկայացնել զեկույցում արձարծված քննադատություններն ու բացթողումները: Մյուս կողմից, մի շարք առցանց լրատվական միջոցներ, ինչպես օրինակ Ռադիո Ազատությունը և Հանրային ռադիոն ներկայացրել են բազմաբնույթ տեսակետներ և ավելի հավասարակշիռ լուսաբանում:

ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԸ

Որպես էական և մտահոգիչ խնդիր ընդդիմադիր ուժերի և որոշ միջազգային կազմակերպությունների կողմից բարձրացվել էր ընտրողների մասնակցության թվի և գործող Նախագահին կողմ քվեարկած ձայների հարաբերակցությունը այն ՏՀՀ-ներում, որտեղ միջինից բարձր էր ընտրողների մասնակցությունը: Այսպես, համաձայն որոշ միջազգային կազմակերպությունների զեկույցներում տեղ գտած տվյալների՝ 1988 տեղամասերից 1746-ը ունեն 300 և ավելի գրանցված ընտրողներ, որոնցից 144-ում ընտրողների թիվը գերազանցել է 80 տոկոսը, ինչը դիտարկվել է որպես անհավանական բարձր ցուցանիշ: Ընտրողների նման քանակ ունեցող 115 տեղամասերում գործող նախագահը ստացել է քվեարկած ձայների ավելի քան 80 տոկոսը: 303 տեղամասերից 198-

ում, որտեղ ընտրողների մասնակցությունը կազմել է 70-80 տոկոս, գործող նախագահը ստացել է ձայների ավելի քան 70 տոկոսը: 155 տեղամասերում, որտեղ ընտրողների մասնակցությունը 50 տոկոսից ցածր էր, Ր. Հովհաննիսյանը ստացել էր ձայների մեծամասնությունը: Նշված խնդրի կապակցությամբ ԱԺ պետաիրավական հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ, Սերժ Սարգսյանի նախընտրական շտաբի պետի տեղակալ Դավիթ Հարությունյանը հայտնել է, որ վերոնշյալ ցուցանիշներն ամեննին չեն վկայում որևէ խնդրի առկայության մասին: Վերջինս հայտնել է նաև, որ այն ընտրատեղամասերում, որտեղ Սերժ Սարգսյանի նախընտրական շտաբը կարողացել է ակտիվ աշխատանք դրսևորել, գործող Նախագահի ստացած ձայները պետք է բնականաբար ավելի բարձր լինեին:

Իշխանության ներկայացուցիչները ընտրությունների կազմակերպման և անցկացման վերաբերյալ ընդդիմության կողմից բարձրաձայնած բողոքների կապակցությամբ հայտնել էին, որ 1988 տեղամասային ընտրական հանձնաժողովներից 1884-ում (95 տոկոս) «Ժառանգություն» կուսակցությունն ունեցել է առաջադրած անդամներ: ՀՀ ընտրական օրենսգրքի համաձայն՝ վստահված անձը և ընտրական հանձնաժողովի անդամը կարող են ընտրական տեղամասում քվեարկության արդյունքներն անվավեր ճանաչելու դիմում ներկայացնել, եթե ներկա են եղել տվյալ ընտրական տեղամասում, ինչպես նաև, եթե քվեարկության ամփոփիչ արձանագրությունում կատարել են գրառում հատուկ կարծիք ունենալու մասին: ՀՀ Ազգային ժողովում ներկայացված քաղաքական ուժերի ու ՀՀ Նախագահի թեկնածուների կողմից առաջադրված թվով 20690 վստահված անձանց և հանձնաժողովի անդամների կողմից որևէ նման դիմում չի ներկայացվել: Այսինքն, նշված անձանց կողմից իրենց իսկ ստանձնած պարտականությունների շրջանակներում ստորագրված արձանագրությունները համարվել են հավաստի և ոչ բողոքարկելի: Ուստի բարձրացված բողոքները չունեն իրավական հիմնավորում:

Հեռընտրական փուլում ԲաՖՖի Հովհաննիսյանի վստահված անձինք ներկայացրել են 16 ՏՀՀ-ներում վերահաշվարկի և 120 ՏՀՀ-ների արդյունքների անվավեր ճանաչելու դիմումներ: Մեկ վերահաշվարկի դիմում էլ ներկայացվել է ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանի վստահված անձի կողմից: Վերահաշվարկի բոլոր դիմումները մերժվել են ԸՀ-ի կողմից, քանի որ դիմումատուները համարվել են ոչ իրավասու դիմում ներկայացնելու համար: 7 ՏՀՀ-ների և ԸՀ-ների կողմից ներկայացված երեք վերահաշվարկի դիմումներ բավարարվել են, և բացահայտվել են չնչին անձշտություններ: Մնացած դիմումները մերժվել են, քանի որ ըստ ԿՀՀ-ի պաշտոնական դիրքորոշման՝ դիմումատուները ներկայացրել են դիմումները Ընտրական օրենսգրքի խախտմամբ, մասնավորապես՝ բացակայել է վստահված անձանց հատուկ կարծիքը: Իսկ արդյունքները անվավեր ճանաչելու դիմումների վերաբերյալ ԿՀՀ-ն հայտնել էր, որ դրանց մի մասը չեն եղել բավարար հիմնավորված, իսկ մյուս մասով չեն պահպանվել Ընտրական օրենսգրքով սահմանված ժամկետները: Ընտրական օրենսգրքի 46-րդ հոդվածը սահմանում է, որ տեղամասում քվեարկության արդյունքները անվավեր ճանաչելու դիմում կարող են ներկայացնել թեկնածուն; վստահված անձը, եթե ներկա է եղել տվյալ ընտրական տեղամասում; համապատասխան տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամը, եթե արձանագրությունում կատարել է գրառում հատուկ կարծիք ունենալու մասին և կենտրոնական ընտրական հանձնաժողովի անդամը: Ավելին, անվավեր ճանաչելու պահանջ ներկայացնելիս, ըստ Օրենսգրքի 47-րդ հոդվածի 2-րդ կետի՝ դիմումատուն պետք է հստակ սահմանի իր պահանջը, բերի հիմնավորումներ, իսկ հնարավոր ապացույցները կցի դիմումին: Ինչ վերաբերում է վերահաշվարկ կատարելու

ինստիտուտին, ապա Ընտրական օրենսգրքի 48-րդ հոդվածը հստակ սահմանում է, որ թեկնածուն, վստահված անձը, եթե ներկա են եղել ընտրական տեղամասում քվեարկության արդյունքների ամփոփմանը, ինչպես նաև տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամը՝ ընտրական տեղամասում քվեարկության արդյունքների վերաբերյալ արձանագրությունում քվեարկության արդյունքների ամփոփման կարգի վերաբերյալ հատուկ կարծիք ունենալու մասին գրառում կատարելու դեպքում, իրավունք ունեն սույն օրենսգրքով սահմանված կարգով և ժամկետներում բողոքարկելու տվյալ ընտրական տեղամասում քվեարկության արդյունքները՝ ընտրատարածքային հանձնաժողով ներկայացնելով ընտրական տեղամասում քվեարկության արդյունքների վերահաշվարկի մասին դիմում: Այսինքն, Օրենսդիրը թեկնածուի կամ վստահված անձի կողմից վերահաշվարկի դիմում ներկայացնելու համար պարտադիր պայման նախատեսել է հատուկ կարծիք ունենալու մասին հանձնաժողովի արձանագրության մեջ գրառում կատարելը: Նման պահանջի վերաբերյալ մեր կողմից ուսումնասիրվել է այլ պետությունների ընտրական օրենսդրությունը, որտեղ կարգավորումները այդպիսի պահանջ չեն նախատեսում:

ՀՀ ընտրական օրենսգիրքը նախատեսում է, որ Հանրապետության Նախագահի ընտրությունը ցանկացած փուլում անվավեր է ճանաչվում, եթե ընտրության նախապատրաստման և անցկացման ընթացքում տեղի են ունեցել սույն օրենսգրքի այնպիսի խախտումներ, որոնք կարող էին ազդել ընտրության արդյունքի վրա: Ըստ էության նման որոշում կայացնելու լիազորությամբ օժտված են՝ ԿԸՀ-ն, Վարչական դատարանը և Սահմանադրական դատարանը: ՀՀ օրենսդրությամբ նախատեսվել է, որ Ընտրությունների արդյունքներով ընդունված որոշումների հետ կապված վեճերով Վարչական դատարանն ընդունում է հետևյալ որոշումներից որևէ մեկը.

- 1) ընտրական հանձնաժողովի որոշումը թողնել ուժի մեջ,
- 2) անվավեր ճանաչել ընտրական հանձնաժողովի որոշումը և
ա. անվավեր ճանաչել ընտրությունների արդյունքները,
բ. ընտրված ճանաչել համապատասխան թեկնածուին կամ կուսակցության (դաշինքի) ընտրական ցուցակում ընդգրկված համապատասխան թվով թեկնածուների,
գ. ընտրությունները ճանաչել չկայացած:

Ավելին, Օրենսդիրը նախատեսել է նաև, որ եթե գործի քննությունից հետո վարչական դատարանը, սպառելով ապացույցներ ձեռք բերելու համար սույն օրենքով նախատեսված բոլոր միջոցները, այդուհանդերձ, հնարավորություն չի ունեցել պարզելու ընտրության իրական արդյունքները, սակայն վարչական դատարանի կողմից որպես հավաստի գնահատված ապացույցներից ակնհայտ է դարձել, որ ընտրախախտումներն ունեցել են կազմակերպված, զանգվածային, կրկնվող կամ պարբերական բնույթ, և դրանց համադրումը վկայում է դրանց միջև համակարգային այնպիսի փոխկապակցվածության մասին, որի պայմաններում խախտվում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 4-րդ հոդվածով ամրագրված ընտրական իրավունքի սկզբունքները, ապա որոշում ընդունելիս վարչական դատարանն իրավասու է այդ հիմքով անվավեր ճանաչելու ընտրությունների արդյունքները: ՀՀ Սահմանադրության 100-րդ հոդվածը նախատեսում է, որ Սահմանադրական դատարանը, օրենքով սահմանված կարգով, լուծում է Հանրապետության Նախագահի և պատգամավորների ընտրությունների արդյունքներով ընդունված որոշումների հետ կապված վեճերը:

ՀՀ Նախագահի ընտրությունների կազմակերպման և անցկացման ընթացքում ընտրական իրավունքների խախտման, ինչպես նաև ընտրողների ցուցակների

անճշտությունները վերացնելու վերաբերյալ ՀՀ դատարաններում ստացվել է 22 հայցադիմում: Ընդ որում, հիշյալ հայցադիմումներից ՀՀ վարչական դատարանում 18.02.2013 թվականի ժամը 20:00-ի դրությամբ մուտքագրվել է 5 հայցադիմում, որոնք ընդունվել են վարույթ, և որոնցով կայացվել են գործն, ըստ էության, լուծող համապատասխան դատական ակտեր: Մնացած 17 հայցադիմումները ստացվել են ՀՀ ընդհանուր իրավասության առաջին աստիճանի դատարաններում: ՀՀ վարչական դատարանը մերժել է մուտքագրված 5 հայցադիմումները՝ որոշ դեպքում հիմք ընդունելով հարցի՝ իր իրավասությունից դուրս գտնվելու հանգամանքը, մյուս դեպքերում՝ վարչական ակտի համապատասխանությունը առաջադրված չափանիշներին:

Սահմանադրական դատարանի դիրքորոշումը

Մարտի 4-ին ՀՀ նախագահի նախկին թեկնածու Բաֆֆի Հովհաննիսյանը դիմում է ներկայացրել ՀՀ սահմանադրական դատարան՝ ՀՀ Սահմանադրության 100-րդ հոդվածի 3.1-րդ կետի և 101-րդ հոդվածի 9-րդ կետի հիմքերով՝ վիճարկելով «Հայաստանի Հանրապետության նախագահ ընտրվելու մասին» ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովի 25.02.2013թ. թիվ 62-Ա և 61-Ա որոշումները: Դիմող կողմը դիմումում, մասնավորապես նշել է հետևյալը. ՀՀ Նախագահի թեկնածու՝ ՀՀ գործող նախագահը քարոզչական նպատակով հայտարարագրման ենթակա ծախսերն արել է ոչ նախընտրական հիմնադրամի միջոցներից, այդ ծախսերի գումարը գերազանցել է թույլատրելի առավելագույն սահմանը, նրա նախընտրական քարոզչական պաստառները ընդհանուր թվով գերազանցել են 1600-ը, քանի որ դրանք փակցված են եղել ընտրական շտաբերի ոչ միայն դրսի, այլև ներսի կողմից, ընտրական շտաբերի քարոզչական տարածքների վարձակալության վարձավճարները պետք է ներառվեին քարոզչական ծախսերի մեջ, սակայն ՀՀ ԿԸՀ-ի որոշմամբ դրանք հանվել են ծախսերի ցուցակից, մինչդեռ դրանց վերաբերյալ առկա են 19.02.2013թ ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ի 19.02.13թ միջանկյալ, ինչպես նաև՝ 02.03.13թ. միջանկյալ արտահերթ զեկույցները, ՀՀ ԿԸՀ-ն ցուցաբերել է անգործություն, չի ուսումնասիրել վերոնշյալ փաստերը և չի դիմել դատարան ՀՀ նախագահի թեկնածուի գրանցումն ուժը կորցրած ճանաչելու համար, փոխարենը 25.02.2013թ. ընդունել է թիվ 60-Ա որոշումը, որով փորձել է արդարացնել իր անգործությունը, ընտրական հանձնաժողովները ցուցաբերել են անգործություն, իրենց նախաձեռնությամբ որևէ տեղամասում չեն կատարել վերահաշվարկ, տեղամասերում ընտրության արդյունքները անվավեր ճանաչելու մասին դիմողի՝ շուրջ 125 դիմումներ մերժվել են:

Նույն խնդրանքով Սահմանադրական դատարան դիմում է ներկայացրել նաև նախագահի նախկին թեկնածու Անդրիաս Ղուկասյանը՝ որպես հիմնավորում վկայակոչելով ՀՀ գործող նախագահ Սերժ Սարգսյանի երկու հայտարարությունները՝ մեկը՝ կապված սփյուռքահայ երաժիշտ Սերժ Թանկյանին ուղղված պատասխան նամակի, մյուսը՝ Գյումրի քաղաքում լրագրողի հարցին տրված պատասխանի հետ: Պարոն Ղուկասյանի համոզմամբ ՀՀ նախագահական ընտրությունների ժամանակ ՀՀ ընտրական հանձնաժողովների եռաստիճան համակարգը ղեկավարվել է ՀՀ գործող նախագահի կողմից, և վերջինս, որպես ՀՀ նախագահի թեկնածու, ի սկզբանե ունեցել է լծակներ՝ քվեարկության ցանկացած արդյունք ապահովելու համար:

Պատասխանող կողմը, չընդունելով դիմողների փաստարկները, նշել է, որ ՀՀ ԿԸՀ-ի 25.02.2013թ. թիվ 60-Ա որոշումը վիճարկվել է վարչական դատարանում և ճանաչվել է իրավաչափ, իսկ եռաստիճան ընտրական հանձնաժողովները կազմավորվել և գործել են ՀՀ

ընտրական օրենսգրքով սահմանված կարգով, պաշտոնատար անձինք, ՀՀ ընտրական օրենսգրքի սահմանափակումների հաշվառմամբ, ազատ են իրականացնել նախընտրական քարոզչություն, դիմողի կողմից ներկայացված բոլոր դիմումները ՀՀ ընտրական օրենսգրքի պահանջներին համապատասխան և պատշաճ ընթացակարգով քննարկվել են ԿԸՀ-ի կողմից և կայացվել են համապատասխան որոշումներ, տրվել են գրավոր պատասխաններ, ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ ընտրությունների նախնական հանգամանքների և եզրակացությունների մասին 19.02.2013թ. նախնական զեկույցում նշվել է, որ պետական և տեղական ինքնակառավարման մարմինների զբաղեցրած շենքերում առկա էին նախընտրական շտաբերի տեղակայման մի քանի դեպքեր:

ՀՀ նախագահի նախկին թեկնածու Րաֆֆի Հովհաննիսյանի դիմումում, մասնավորապես, նշվել էր ընտրական հանձնաժողովների կողմից ցուցաբերած անգործության, իրենց նախաձեռնությամբ որևէ տեղամասում վերահաշվարկ չիրականացնելու վերաբերյալ, ինչի առնչությամբ ՀՀ սահմանադրական դատարանը վկայակոչել էր ՀՀ ընտրական օրենսգրքի 48-րդ հոդվածի 1-ին մասը՝ արձանագրելով, որ սույն հոդվածով նախատեսված հնարավորությունը՝ քվեարկության արդյունքները վերահաշվարկի միջոցով բողոքարկելու և քվեարկությանը մասնակցած ընտրողների կողմից ստորագրած ընտրացուցակների հավաստիությունը ստուգելու, տարաբնույթ կասկածները փարատելու՝ օրենքով նախատեսված հիմնական միջոցն է, ինչից դիմողները գրեթե չեն օգտվել: ՀՀ սահմանադրական դատարանն իր որոշման մեջ հավելել է նաև, որ համաձայն ՀՀ ընտրական օրենսգրքի 46-րդ հոդվածի 7-րդ մասի «Կենտրոնական ընտրական հանձնաժողովի որոշումները, գործողությունները (անգործությունը) (բացառությամբ համապետական ընտրությունների արդյունքների վերաբերյալ որոշումների) կարող են բողոքարկվել վարչական դատարան...»:

ՀՀ սահմանադրական դատարանը, անդրադառնալով դիմող կողմի ներկայացրած պահանջներին, հստակ սահմանել է նաև, որ ընտրության արդյունքներով ընդունված որոշումների հետ կապված վեճերը չեն կարող դիտարկվել որպես իրավական նորմի սահմանադրականության վեճեր, քանի որ վերջիններիս լուծման համար սահմանադրաիրավական այլ պահանջներ ու ընթացակարգեր են նախատեսված: Դատարանը նաև արձանագրել է, որ ՀՀ օրենսդրությամբ, Սահմանադրական դատարանը իրավասու չէ քննության առարկա դարձնել այն հարցերը, որոնք նախապես քննության պետք է առնվեն և իրավական լուծում ստանան ՀՀ վարչական դատարանում, որի որոշումներն այդ հարցերում վերջնական են և վերանայման ենթակա չեն: Ըստ դատարանի՝ գործի քննությունը վկայել է, որ դիմողների կողմից հիմնականում անտեսվել կամ իրավաչափ ձևով ու օրենքով սահմանված կարգին ու ժամկետներին համահունչ չեն իրացվել ՀՀ Սահմանադրության, «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի, ՀՀ ընտրական օրենսգրքի և ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի համապատասխան դրույթները: Դատարանը նշել է, որ ընտրությունների արդյունքների հրապարակումից հետո և ԿԸՀ թիվ 62-Ա որոշումն ընդունելուց հետո ՀՀ վարչական դատարանը վարույթ է ընդունել ընտրական գործընթացին առնչվող երկու հայցադիմում, որոնք բացառապես վերաբերել են վարչական դատարանի իրավասությանը և դատաքննության արդյունքներով մերժվել են: Բացի այդ ՀՀ սահմանադրական դատարանը իրավասու չէ ու չի կարող ստանձնել օրենքով նախատեսված կարգով ու համապատասխան լիազորությամբ ընտրական գործընթացին մասնակից քաղաքական ուժերի ու նրանց կողմից ներկայացվող և նրանց կողմից առաջադրված տասնյակ հազարավոր իրավասուբյեկտների, ընտրական հանձնաժողովների, այլ դատարանների լիազորությունների և պարտականությունների

վերակատարումը 10-օրյա ժամկետում, որոնք ի պաշտոնե պարտավորված են եղել ՀՀ ընտրական օրենսգրքով սահմանված կարգով և ժամկետներում կատարել համապատասխան գործողություններ: Սահմանադրական դատարանի որոշման իրավական հիմք կարող է հանդիսանալ բացառապես նշված սուբյեկտների իրավաչափ գործողության արդյունքում ձևավորված ապացուցողական նշանակության իրավական փաստերի համակցության համադրված գնահատումը: Հատկանշական է, որ նման դիրքորոշում Սահմանադրական դատարանը հայտնել է նաև իր նախկին որոշումներում:

Ստեղծված իրավիճակի վերաբերյալ Դատարանը շեշտել է, որ դրա պատճառը ոչ միայն իրավագիտակցության, իրավական ու քաղաքական մշակույթի առկա մակարդակն է, այլև այն օբյեկտիվ իրողությունը, որ տվյալ ընկալումն առաջին հերթին երկրի քաղաքական համակարգի ու իշխանության նկատմամբ անվստահության արտացոլանքն է, ինչը դեռևս չի հաղթահարվում: Սահմանադրական դատարանին դիմողների հարցադրումները հիմնականում վերաբերել են ընտրությունների արդյունքներն անվավեր ճանաչելուն՝ դիմումներին կից ներկայացված նյութերի շրջանակներում: Այդ նյութերի համակցված գնահատման արդյունքում Սահմանադրական դատարանն արձանագրել է, որ դրանք կարող էին օրենքով սահմանված կարգով ու ժամկետներում ընտրական տեղամասերում քվեարկության արդյունքները բողոքարկելու հիմք կամ առիթ հանդիսանալ, ինչը սակայն դիմողների կողմից չի արվել: Բացառությունը, թերևս, 17/5 ընտրական տեղամասի քվեարկության արդյունքներին առնչվող փաստարկներն էին, ինչի ուսումնասիրման արդյունքում ՀՀ սահմանադրական դատարանը գտել է, որ այդ արդյունքները չէին կարող համարվել հավաստի: Արդյունքում նշված տեղամասում քվեարկության արդյունքները Դատարանը ճանաչել է անվավեր:

Այսպիսով, ամբողջությամբ ուսումնասիրելով դիմումները՝ 2013 թվականի մարտի 13-ին Սահմանադրական դատարանը որոշել է չբավարարել դիմողների պահանջը և ուժի մեջ թողնել ԿՀՀ-ի 25.02.2013թ թիվ 62-Ա որոշումը:

Այնուամենայնիվ, որոշ մտահոգիչ հարցերի վերաբերյալ Սահմանադրական դատարանն իր դիրքորոշումը որոշման մեջ հայտնել է առանձին: Վարչական ռեսուրսի չարաշահման դեպքերի վերաբերյալ Դատարանն իր որոշման շրջանակներում նշել է, որ դրանք զգալի չափով պայմանավորված են տասնամյակների ընթացքում երկրում քաղաքական, տնտեսական ու վարչական ներուժի սերտաճման այն միտումներով, երբ սահմանադրական հիմնարար արժեքների ու սկզբունքների, մասնավորապես՝ իշխանությունների բաժանման ու հավասարակշռման սկզբունքի, ձևախեղման վտանգ է առաջանում:

Դատարանն անդրադարձել է նաև հետընտրական զարգացումներին և նշել, որ առկա իրավիճակի պայմաններում երկրի բնականոն զարգացումը երաշխավորելու և սահմանադրականության ամրապնդման իրավաչափ ու արդյունավետ միջոց կարող է դառնալ ժողովրդավարական հիմնարար սկզբունքներից ելնելով քաղաքական լայն համաձայնության, հանդուրժողականության, քաղաքակիրթ երկխոսության արդյունքում անհրաժեշտ սահմանադրաիրավական բարեփոխումների իրականացումը: